Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 07.06.2023թ. չորեքշաբթի թիվ 26 (1103)

Վասն մանկանց

«Կոմիտասյան բառերը հաճախակի կիրառեք...»

ԿԳՄՍ նախարարության ենթակայության կառույցները՝ թանգարանները, գրադարանները, թատրոնները, երեխաների պաշտպանության միջազգային օրվա խորհրդին համահունչ, կազմակերպել են մանկապատանեկան բազմաբնույթ միջոցառումներ:

ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արվեստների վարչության պետ **Աստղիկ Մարաբյանը** տոնի շրջանակում այցելել են Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, որտեղ երեխաների մասնակցությամբ անցկացվել են *«Բույս ու սեր»* եւ *«Բուսաբարեւ»* կրթամշակութային միջոցառումները: *«Բույս ու սեր»* միջոցառման շրջանակում թանգարան-ինստիտուտի փոքրիկ այցելուները նկարել են բնության, բույսերի, ծառերի եւ ծաղկունքի թեմայով, իսկ *«Բուսաբարեւ»* կրթական ծրագրի շնորհիվ երեխաները բացահայտել են Կոմիտասի բանաստեղծական աշխարհը, ապա ստեղծագործել կոմիտասյան բառերով:

Նախարարը կոչ է արել երեխաներին նոր սովորած բառերը հաճախակի կիրառել եւ տարածել հասակակիցների շրջանում: Ժաննա Անդրեասյանը հետաքրքրվել է՝ ինչ նախասիրություններ ունեն երեխաները, ինչ հագեցվածությամբ են անցկացնելու ամառային արձակուրդը, ինչպես են պատկերացնում երեխաների իրավունքների պաշտպանությունը պետության կողմից: Ի պատասխան նախարարի հարցերի՝ փոքրիկները վստահեցրել են, որ պաշտպանված են զգում ամուր ընտանիքում եւ նոր գիտելիքներ ձեռք բերելիս: Նրանք ցուցադրել են նաեւ իրենց իմացությունը՝ պատմելով, թե ինչ գիտեն Կոմիտասի կենսագրության մասին: Փոքրիկները նաեւ կատարել են Վարդապետի *«Անձրեւն եկավ»* երգը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ թանգարանային միջոցառումները ոչ միայն ժամանցային են, այլեւ կրթամշակութային եւ ուսուցողական: *«Կարեւոր է, որ երեխաների համար նախատեսված միջոցառումներն անցկացվում են խաղային ձեւաչափով՝ առանց լրացուցիչ ծանրաբեռնվածության, եւ իրենք չեն էլ նկատում, թե ինչպես են սովորում: Սա հանգստի ձեւ է, որը նաեւ զարգացնում է երեխաների կարողությունները»,-* ասել է նա:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ ԿԳՄՍ նախարարության ծրագրերի գերակշիռ մասն ուղղված է երեխաների կրթության իրավունքի իրացման համար լավագույն պայմաններ ստեղծելուն: Հիմնական նպատակը, ինչպես նախարարն է նշել, բոլոր բնակավայրերում դրանց հասանելիության եւ մատչելիության ապահովումն է: *«Ամենակարեւոր իրավունքը, որը նաեւ կրթության ռազմավարության առանցքն է, որակյալ եւ ներառական կրթության հասանելիության ապահովման իրավունքն է: Դրան է ուղղված, օրինակ, Կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը: Առանցքային է նաեւ երեխաների մասնակցության իրավունքը կարեւոր որոշումներում, ինչն ապահովելու համար կրթական համակարգում տարբեր մոդելներ կան: Օրինակ՝ գործում է ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհուրդ, որի կազմում ընդգրկված աշակերտներից արժեքավոր դիտարկումներ ենք լսում եւ դրանք հաշվի առնում ոլորտային փաստաթղթեր մշակելիս»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը:

շարունակությունը՝ էջ 2

Նախագահականում

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ՝ ՀՀ նախագահի նստավայրում հյուրընկալվել էին ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող *«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»* ՊՈԱԿ-ի եւ *«Դանիելյան»* արվեստի կենտրոնի սաները:

Նախագահական նստավայրի բացօթյա տարածքում կայացել է երեխաների ստեղծագործությունների ցուցահանդեսը, ինչպես նաեւ նրանց համար կազմակերպվել է ժամանցային ու մշակութային միջոցառում:

ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը** Կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանի,** Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարար **Նարեկ Մկրտչյանի** եւ հյուրերի հետ ծանոթացել է ներկայացված աշխատանքներին, շրջել տաղավարներով եւ զրուցել երեխաների հետ:

Միջոցառման ավարտին ցուցահանդեսի մասնակիցները նկարչական պարագաներ են նվեր ստացել:

Արամ Խաչատրյան-120

Հիրավի աշխարհահռչակ

Հունիսի 6-ին լրացավ **Արամ Խաչատրյանի** ծննդյան **120**-ամյակը: ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ստեղծվել է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հոբելյանական հանձնաժողով, որը հաստատել է միջոցառումների ծրագիրը: *«Արամ Խաչատրյան»* համերգասրահում տեղի է ունեցել խաչատրյանական տարվա հոբելյանական ծրագրերին եւ միջոցառումներին նվիրված մամուլի ասուլիս:

Ասուլիսի բանախոսներն էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը,** Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգայի ակադեմիական թատրոնի տնօրենի պաշտոնակատար **Կարեն Դուրգարյանը,** Արամ Խաչատրյան տուն-թանգարանի տնօրեն **Արմինե Գրիգորյանը,** Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ *«Արամ Խաչատրյան»* համերգասրահի տնօրեն **Նորայր Նազարյանը,** Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն **Սարգիս Բալբաբյանը** եւ Կոմիտասի անվան կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն **Գարեգին Սարգսյանը:**

շարունակությունը՝ էջ 7

Խորհրդարան

Զարգացման տանող ցուցանիշներ

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել են 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին ԿԳՄՍՆ հաշվետությունը: Նիստը վարել են հանձնաժողովների նախագահներ **Սիսակ Գաբրիելյանը** եւ **Գեւորգ Պապոյանը:**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ **Վահան Սիրունյանը** հայտնել է, որ 2022 թվականին ԿԳՄՍ նախարարությունն իրականացրել է 21 ծրագիր՝ 205 միջոցառումով:

շարունակությունը՝ էջ 4

Աշխարհի հետ

Փոխադարձ հարգանքի ամենաամուր հենքը մշակույթն է

Հայաստանի Հանրապետությունում մայիսի 31-ից հունիսի 2-ն անցկացվեցին Թուրքմենստանի մշակույթի օրեր:

«Արամ Խաչատրյան» համերգասրահում մշակույթի օրերի մեկնարկը տրվել է բացման գալա համերգով, որի շրջանակում տեղի է ունեցել Թուրքմենստանի մշակույթի եւ արվեստի վարպետների համերգ:

Ծրագրի բացմանը ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** Թուրքմենստանի մշակույթի նախարար **Ատագելդի Շամուրադովը,** ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը,** ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան **Մուհամետգելդի Այազովը:**

շարունակությունը՝ էջ 3

«Կոմիտասյան բառերը հաճախակի կիրառեք...»

սկիզբը՝ էջ 1

Երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում նախարարն անդրադարձել է նաեւ դասագրքերի բեռնաթափման հարցին. *«Հանրակրթական նոր չափորոշչով դասագրքերի փոփոխությունն ընթացքի մեջ է: Դիտարկվում են դրանց էլեկտրոնային եւ հիբրիդային տարբերակները՝ նպատակ ունենալով կրճատել ծավալը: Դասագրքի թղթային տարբերակին պետք է լրացնի էլեկտրոնայինը, որը, շնորհիվ թվային գործիքների կիրառման, կնպաստի կրթության որակի բարձրացմանը, եւ միաժամանակ կթեթեւանա պայուսակի բեռը»,*- նշել է նախարարը՝ հավելելով, որ նոր նախագծվող եւ կառուցվող դպրոցներում նախատեսված է դպրոցական գրադարանները վերածել ռեսուրս կենտրոնների:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ այցի շրջանակում ԿԳՄՍ նախարարը ծանոթացել է նաեւ թանգարանի հիմնական ու ժամանակավոր ցուցադրություններին: Այժմ թանգարան-ինստիտուտում Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ ներկայացված է *«Դարից երկար. Արշակ Չոպանյան-Կոմիտաս Վարդապետ»* ցուցադրությունը՝ անվանի մտավորականների կյանքի 6 դրվագով:

Շառլ Ազնավուր-100

Հոբելյանին ընդառաջ

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանձնաժողովի նախագահ **Արայիկ Հարությունյանի** գլխավորությամբ՝ ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել հանձնաժողովի հերթական նիստը:

Նիստին մասնակցել են նաեւ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը:**

Քննարկվել են աշխարհահռչակ շանսոնյեի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը, ներկայացված առաջարկությունները: Նիստի ընթացքում մտքեր են փոխանակվել միջոցառումների ձեւաչափերի, ժամանակացույցի եւ կազմակերպչական այլ հարցերի շուրջ:

Հանձնաժողովի նիստին ներկայացվել է նաեւ *«Ազնավուր»* հիմնադրամի հոբելյանական միջոցառումների ցանկը: Ինչպես նշել է Շառլ Ազնավուրի որդին՝ *«Ազնավուր»* հիմնադրամի համահիմնադիր Նիկոլա

Ազնավուրը, այն մշակվել է Հայաստանի եւ Ֆրանսիայի կառավարությունների, մշակութային տարբեր կազմակերպությունների, հանրային կառույցների, ինչպես նաեւ ընտանիքի մյուս անդամների հետ սերտ համագործակցության արդյունքում: Նշվել է, որ հոբելյանական միջոցառումները տեղի են ունենալու 2024 թվականին եւ արվելու է հնարավորը՝ ողջ տարվա ընթացքում Ազնավուրի արվեստի շունչը զգալու համար:

Ծրագրի շրջանակում նախատեսվում են մի շարք միջոցառումներ մայրաքաղաքում եւ մարզերում, մասնավորապես՝ պաստառների տպագրություն, համերգներ, թատերական ներկայացում, փոստային նամականիշների մարում, գրքի տպագրություն, ֆիլմերի ցուցադրություն, ձայնագրություններ, լուսանկարների ցուցադրություն եւ այլն: Նշվել է նաեւ, որ ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու հարցում:

Արայիկ Հարությունյանը պատասխանատուներին հանձնարարականներ է տվել առաջիկա անելիքների վերաբերյալ եւ ընդգծել Շառլ Ազնավուրի հոբելյանական տարին սահուն, հարթ եւ պատշաճ մակարդակով կազմակերպելու կարեւորությունը: Այդ համատեքստում Վարչապետի աշխատակազմի ղեկավարը կարեւորել է նաեւ շահագրգիռ գերատեսչությունների, համապատասխան կառույցների հետեւողական, արդյունավետ, համակարգված աշխատանքը:

Աշխարհի հետ

Համագործակցության թե՛ լավ փորձ, թե՛ ավելի մեծ ներուժ

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան **Քրիստինա Քվինի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Ժաննա Անդրեասյանը, ողջունելով դեսպան Քրիստինա Քվինին, շնորհավորել է նրան՝ նշանակման առթիվ եւ մաղթել արդյունավետ աշխատանք՝ ի շահ հայ-ամերիկյան բարեկամական կապերի զարգացման՝ համոզմունք հայտնելով, որ նա իր ներդրումը կունենա Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների առավել ամրապնդման եւ խորացման գործում:

«Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ուղղություններով ունենք համագործակցության թե՛ լավ փորձ, թե՛ ավելի մեծ պոտենցիալ: Ուրախ կլինենք միասին աշխատել բոլոր ուղղություններով»,- ասել է ԿԳՄՍ նախարարը՝ ընդգծելով, մասնավորապես, համատեղ իրականացված *«Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում»* ծրագիրը, որն ամփոփվում է այս օրերին:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ ԱՄՆ-ի հետ քաղաքացիական կրթության ծրագրերի շուրջ համագործակցության հեռանկարները՝ ընդգծելով, որ այն մեր կրթության բարեփոխումների առանցքում է:

Մշակույթի ոլորտում Ժաննա Անդրեասյանն արժեւորել է հատկապես ԱՄՆ աջակցությունը՝ ուղղված Հայաստանի մշակութային եւ պատմական ժառանգության պահպանմանը, որը նախարարի գնահատմամբ՝ առանցքային կետ է երկու երկրների հարաբերություններում: Այս համատեքստում՝ Ժաննա Անդրեասյանը շեշտել է ԱՄՆ դեսպանների՝ մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված՝ Մեղրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես (Սուրբ Սարգիս) եկեղեցու վերակառուցման ու պահպանության ծրագիրը եւ նշել, որ այժմ աշխատանքներ են տարվում Սանահինի վանական համալիրի եւ Երերույքի տաճարի վերակառուցման ուղղությամբ:

ԿԳՄՍ նախարարը առաջարկել է մշակույթի ոլորտում դիտարկել նաեւ համատեղ փառատոնների ու ցուցադրությունների անցկացման հնարավորությունը՝ հաշվի առնելով երբեմն լավ փորձը:

ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել Հայաստանի հետ համագործակցության խորացման կարեւորությունը. *«Համատեղ իրականացվում են բազմաթիվ կրթական ու մշակութային ծրագրեր, որոնք իսկապես շատ կարեւոր են: Այդուհանդերձ, համագործակցության ավելի լայն հեռանկարներ կան: Ուրախ կլինեմ շարունակել ձեւավորված լավ ավանդույթներն ու համատեղ արդյունավետ աշխատանքը»:*

Կողմերն անդրադարձել են կրթական փոխանակման համատեղ ծրագրերին, անգլերենի ուսուցման մի շարք նախագծերին՝ ուղղված ուսուցիչների եւ դասավանդողների վերապատրաստումներին, գյուղական համայնքներում անգլերենի ուսուցմանը նպաստող համատեղ ծրագրերին:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ Հայաստանում ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորների գործունեության վերսկսումը, որը վերջին տարիներին ընդհատվել էր՝ կորոնավիրուսի համաճարակի իրավիճակով եւ պատերազմով պայմանավորված: *«Համագործակցության տարիների ընթացքում ԱՄՆ Խաղաղության կորպուսի հարյուրավոր կամավորներ են ծառայել՝ աջակցելով անգլերենի դասավանդմանը Հայաստանի տարբեր մարզերում»,*- ասել է նախարարը:

Հանդիպման ընթացքում Ժաննա Անդրեասյանն իր մտահոգությունն է հայտնել Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդրի առնչությամբ:

Կողմերը քննարկել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Մշակույթ

«Բարեւ, ես եմ» ֆիլմի վերականգնված տարբերակի պրեմիերան

Կաննի 76-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում *«Դասականներ»* բաժնում տեղի է ունեցել Ֆրունզե Դովլաթյանի *«Բարեւ, ես եմ»* (1965 թ.) ֆիլմի 4K վերականգնված տարբերակի պրեմիերան՝ վերահաստատելով կինոաշխարհի մեծերի հետ նույն էկրանին ներկայացվելու մեր իրավունքը՝ Գոդարի, Օձուի, Ման Ռեյի, Ալֆրեդ Հիչքոքի կողքին: Սա հայ մշակույթի ու հայ կինոյի միջազգային քարոզչության առումով ունի աննախադեպ կարեւորություն:

Հայ կինոյի փառատոնային պատմության մեջ կես դար անց սա ֆիլմի վերադարձն էր աշխարհի ամենահեղինակավոր կինոփառատոն, որտեղ *«Բարեւ, ես եմ»* ֆիլմը ներառված է եղել 1966 թվականի մրցութային ծրագրում:

Կինոժապավենի թվանշային վերականգնումն իրականացվել է Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ՝ *«Հայաստան»* համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, իսկ վերականգնման աշխատանքները կատարվել են ֆիլմի բնօրինակ սեւապատկերից՝ լատվիական *«Լոկոմոտիվ կլասիկս»* ստուդիայի կողմից:

Ֆիլմը հանդիսատեսին ներկայացրել են *«Դասականներ»* ծրագրի համադրող **Ջերալդ Դյուշասոն,** Հայաստանի ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժնի ղեկավար **Վիգեն Գալստյանը** եւ խորհրդային կինոյի մասնագետ **Ջոել Շապրոնը**՝ կինոկենտրոնի տնօրեն **Շուշանիկ Միրզախանյանի,** Համահայկական հիմնադրամի տնօրեն **Հայկակ Արշամյանի** եւ *«Լոկոմոտիվ»* ստուդիայի տնօրեն **Ռոբերտս Վինովսկիսի** ներկայությամբ:

Ցուցադրությանը ներկա էր նաեւ Ֆրանսիայում Հայաստանի դեսպան **Հասմիկ Տոլմաջյանը:** Ցուցադրության նախօրեին Հայաստանի ազգային կինոկենտրոնի եւ ֆրանսիական MK2 դիստրիբյուցիոն ընկերության միջեւ կնքվել է պայմանագիր, որի շնորհիվ ֆիլմը կներկայացվի միջազգային տարբեր հարթակներում:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի՝ Կաննի 76-րդ միջազգային կինոփառատոնի *«Marche du Film»* կինոշուկային մասնակցությունը Հայ կինոյի 100-ամյակի պետական հոբելյանական ծրագրի շրջանակում է, որն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Փոխադարձ հարգանքի ամենաամուր հենքը մշակույթն է

սկիզբը՝ էջ 1

Հանդիսավոր արարողությանը ողջունի խոսքով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Նա շնորհավորել է Հայաստանում Թուրքմենստանի մշակույթի օրերի անցկացման կապակցությամբ եւ նշել, որ մշակույթի օրերը կարեւոր, նշանակալից եւ, միեւնույն ժամանակ, երկար սպասված միջոցառում են:

«Այն նախատեսվում էր կազմակերպել դեռեւս 2020 թվականին, ինչը, ցավոք, չհաջողվեց՝ կորոնավիրուսի համաճարակի պատճառով: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն ուրախ է հյուրընկալել Թուրքմենստանի մշակույթի նախարար Ատագելդի Շամուրադովի գլխավորած պատվիրակությանը: Այսօրվա միջոցառման կայացումը հերթական անգամ հաստատում է այն ճշմարտությունը, որ դժվարին ժամանակներում մարդկային հաղորդակցության, ազգերի փոխճանաչման եւ փոխադարձ հարգանքի ամենաամուր հենքը մշակույթն է: Իսկ մշակույթի ոլորտում հայ-թուրքմենական հարաբերություններն ունեն խորը արմատներ»,- նշել է նախարարը եւ վստահություն հայտնել, որ հայ-թուրքմենական փոխհամագործակցությունը մշտապես հագեցած կլինի նոր նախաձեռնություններով:

Ժաննա Անդրեասյանը մեծապես կարեւորել է Թուրքմենստանի հետ ավանդական բարեկամական հարաբերությունների զարգացումը, որի շրջանակում կայուն համագործակցություն է ձեւավորվել Թուրքմենստանի մշակույթի նախարարության հետ: Համագործակցությունը ներառում է ինստիտուցիոնալ կապերի ստեղծումը, վերջին տարիներին իրականացված փոխադարձ մշակույթի օրերը, կրթամշակութային համատեղ նախագծերն ու ծրագրային նախաձեռնությունները:

Թուրքմենստանի մշակույթի նախարար Ատագելդի Շամուրադովը նույնպես շնորհավորել է ներկաներին՝ Հայաստանում Թուրքմենստանի մշակույթի օրերի բացման կապակցությամբ՝ նոր լիցքեր մաղթելով հայ-թուրքմենական մշակութային կապերի հետագա զարգացմանը: Նա բարձր է գնահատել երկու երկրների մշակութային կապերը, որոնք խարսխված են ժողովուրդների հարուստ փորձի, բարի ավանդույթների եւ երկկողմանի ամուր համագործակցության վրա: Ատագելդի Շամուրադովը շնորհակալությունն է հայտնել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը մշակույթի օրերի կայացման համար հետեւողական ջանքերի համար: *«Մշակութային օրերի շրջանակում անցկացվող միջոցառումները մեծ հնարավորություն են տալիս երկու երկրների ժողովուրդներին՝ ավելի լավ ճանաչել միմյանց մշակույթը եւ առավել խորացնել միջմշակութային համագործակցությունը»,-* ընդգծել է նա:

Աշխարհի հետ

«Հումանիտար ճգնաժամը շարունակվում է մինչ օրս...»

ՀՀ ԿԳՄՍ Նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Եվրոպական խորհրդի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով աշխատանքային խմբի անդամներին: Հանդիպմանը ներկա են եղել նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը,** Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան **Անդրեա Վիկտորինը,** ԵՄ պատվիրակության ղեկավարի տեղակալ **Յան Պլեշինգերը,** Հայաստանում ԵՄ պատվիրակության խորհրդական **Մարիա Պապամիխայիլը** եւ այլք:

Ողջույնի խոսքում Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ ԿԳՄՍ նախարարությունն ակտիվորեն ներգրավված է ԵԽ մի շարք հարթակներում, իրականացվում են մի շարք կարեւոր ծրագրեր կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում: Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը ԵԽ տարբեր փաստաթղթերի վավերացմամբ ստանձնել է նաեւ ոլորտային պատասխանատվություն՝ իրականացնելու որոշակի աշխատանքներ եւ վերահաստատել է դրանց շարունակականության մտադրությունը, ինչպես նաեւ հավատարմությունը Եվրոպայի խորհրդի սկզբունքներին ու արժեքներին: ԿԳՄՍ նախարարն առանձնացրել է հատկապես Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի մշակման փուլում ԵՄ հետ ակտիվ համագործակցությունը. *«Նախորդ տարեվերջին ծրագիրը հաստատվեց եւ ստացավ օրենքի ուժ, ինչը շատ երկար սպասված արդյունքն էր եւ որի համար մեծ ջանքեր էին գործադրվել»:*

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ *«ԵՄ-ն հանուն նորարարության»* ծրագրին, որի շրջանակում Տավուշի մարզի դպրոցները ստացել են լաբորատոր սարքավորումներ եւ գույք: Նախարարը կարեւորել է նաեւ *«Ստեղծագործ Եվրոպա»* ծրագիրը՝ առանձնացնելով դրա *«Մշակույթ»* ենթածրագիրը, որի հիմնական նպատակն է պաշտպանել, զարգացնել եւ տարածել եվրոպական մշակութային եւ լեզվական բազմազանությունը՝ որպես Եվրոպայի մշակութային ժառանգության մաս:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ գիտության ոլորտում եվրամիության գործընկերների հետ համագործակցությունը, մասնավորապես *«Հորիզոն Եվրոպա»* հետազոտությունների եւ նորարարության շրջանակային ծրագիրը, որը միտված է նպաստել գիտական կազմակերպություններում եւ բուհերում գործող գիտական խմբերի համագործակցության զարգացմանը՝ գիտական համատեղ հետազոտություններ իրագործմամբ: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ *«Հորիզոն Եվրոպա»* ծրագրի շրջանակում Հայաստանն ունի շոշափելի եւ ոգեւորող արդյունքներ. գիտական կազմակերպությունները վերջին 2 տարում շուրջ 2,5 մլն եվրո ֆինանսավորում են ստացել:

Համագործակցության հաջորդ կարեւոր ուղղությունը, ըստ նախարարի, մասնագիտական կրթության եւ ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտն է, որի շրջանակում համագործակցությունն իրականացվում է *«Էրազմուս+»* ծրագրի միջոցով:

Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ շեշտել՝ կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում Հայաստանի հետ ձեւավորվել է արդյունավետ համագործակցություն: Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարը, կարեւորելով ոչ ֆորմալ եւ ինֆորմալ կրթության ոլորտում Հայաստանի հետ համագործակցությունը, տեղեկացրել է՝ Սյունիքի մարզում առաջիկայում նախատեսվում է երկու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն հիմնել:

Նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը Եվրոպական խորհրդի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով աշխատանքային խմբի անդամների ուշադրությունը հրավիրել է Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդրին:

Անդրադառնալով ամենալուրջ մարտահրավերներին՝ ԿԳՄՍ նախարարը շեշտել է մասնավորապես Լեռնային Ղարաբաղում հաստատված հումանիտար ճգնաժամի խնդիրը՝ ընդգծելով, որ դրա արդյունքում խախտվել են շուրջ 120 հազար բնակչի, այդ թվում՝ 30 հազար երեխայի հիմնարար մի շարք իրավունքներ: *«Խախտվել է նաեւ երեխաների՝ ընտանիքում մեծանալու իրավունքը: Շուրջ 300 անչափահասներ, որոնք մնացել էին առանց ուղեկցության, արգելափակված էին Հայաստանում կամ Լեռնային Ղարաբաղում, մինչդեռ նրանց ծնողները գտնվում էին Լաչինի միջանցքի երկու կողմերում: Լեռնային Ղարաբաղի դպրոցները եւ մանկապարտեզները ժամանակավորապես դադարեցրել էին իրենց գործունեությունը, շուրջ 6500 աշակերտ զրկվել էր կրթության իրավունքից: Հումանիտար ճգնաժամը շարունակվում է մինչ օրս, ինչն անընդունելի է»,-* եզրափակել է Ժաննա Անդրեասյանը:

Աշխարհի հետ

Քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** հանդիպել են ՀՀ-ում Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան **Վիկտոր Ռիխտերի** հետ:

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով դեսպանին, կարեւորել է հայ-գերմանական կրթական, գիտական, մշակութային ու սպորտային ոլորտներում համագործակցության արդյունավետ շարունակությունը: Նա նաեւ նշել է, որ Հայաստանը համագործակցությունն առավել խորացնելու եւ ընդլայնելու լայն օրակարգ ունի:

ԿԳՄՍ նախարարը, մատնանշելով Գերմանիայի արդյունավետ փորձը՝ հատկապես կրթության ոլորտում, կարեւորել է ՀՀ հանրակրթական դպրոցներում գերմաներենի խորացված ուսուցման, ուսուցիչների վերապատրաստման իրականացումը: Ժաննա Անդրեասյանն առաջնահերթ է համարել միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող հայ-գերմանական համագործակցության ծրագիրը, որի

արդյունքում՝ ՀՀ ՄԿՈ մի շարք հաստատություններում ներդրվել է դուալ կրթությունը:

Կողմերը քննարկել են նաեւ միջբուհական համագործակցության զարգացման հարցը՝ կարեւորելով դասախոսների, երիտասարդ գիտնականների, ուսանողների փոխանակման եւ կրթահետազոտական համատեղ ծրագրերի իրականացման հարցերը:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ գիտության ոլորտում եւս համագործակցության դինամիկ զարգացում է նկատվում, որի վկայությունը հայ գիտնականների գիտական մի շարք հոդվածների տպագրությունն է գերմանական հայտնի ամսագրերում:

Անդրադարձ է եղել նաեւ Գերմանական ակադեմիական փոխանակման կենտրոնի (DAAD) աջակցությամբ իրականացվող ծրագրերի, Երեւանում *«Գյոթե» կենտրոնի* գործունեության ընդլայնման կարեւորության մասին:

ԿԳՄՍ նախարարը փաստել է, որ համագործակցությունը մշակույթի ոլորտում նույնպես արդյունավետ է ընթանում. իրագործելի են թե՛ կինոարվեստի, թե՛ երաժշտության ոլորտում փոխգործակցության հեռանկարները:

Դեսպան Վիկտոր Ռիխտերը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության եւ պատրաստակամության համար: Նա բարձր է գնահատել հայ-գերմանական համագործակցության շարունակությունը նշված ուղղություններով՝ ընդգծելով, որ պատրաստ է աջակցել նախանշված ծրագրերի արդյունավետ իրագործմանը:

Զարգացման տանող ցուցանիշներ

սկիզբը՝ էջ 1

Նախապես պլանավորված է եղել իրականացնել 179 միջոցառում: Տարեկան պլանը կազմել է 226 մլրդ 801 մլն դրամ, սկզբնապես պլանավորված բյուջեի փաստացի կատարողականը կազմել է 202 մլրդ 606 մլն դրամ: Տարվա ընթացքում կատարվել են վերաբաշխումներ եւ փոփոխություններ: Ճշտված բյուջեն կազմել է 208 մլրդ 146 մլն դրամ: Ճշտված բյուջեի նկատմամբ կատարողականը կազմել է 97,3 տոկոս: Նախորդ տարվա համեմատ ոլորտում բյուջետային ծախսերն աճել են 15,9 տոկոսով կամ շուրջ 27 մլրդ 796 մլն դրամով:

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** ներկայացրել է իրականացված ծրագրերը՝ նշելով, որ այդ ընթացքում արձանագրվել են ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ խնդիրներ, որոնց կարգավորման ուղղությամբ քայլեր են իրականացվում: *«Այս տարի 97,3 տոկոս փաստացի կատարողական ունենք բյուջեի նկատմամբ, եւ 2021 թվականի համեմատ 2022 թվականի փաստացի բյուջեն աճել է գրեթե 16 տոկոսով: Ընդ որում՝ կապիտալ ծախսերի մասով 2021 թվականի նկատմամբ ունենք փաստացի ծասերի աճ շուրջ 9 մլրդ դրամով, եւ այստեղ կարեւոր է հասկանալ՝ ինչպիսի դինամիկա կա: 2022 թվականի կապիտալ ծախսերի մասով կարողացել ենք կատարել 19 մլրդ 357 մլն դրամ, որը լուրջ առաջընթաց է 2021 թվականին իրականացված գործընթացների մասով»,-* նշել է նախարարը:

Նրա խոսքով՝ ծախսերի գերակշիռ մասը՝ միջոցների շուրջ 75 տոկոսը, հատկացվել է կրթության ոլորտին: *«Այստեղ ունեցել ենք էական աճ կապիտալ ծախսերի գծով, մասնավորապես՝ կրթության ոլորտում 2021 թվականի համեմատ կապիտալ ծախսերն աճել են 104 տոկոսով, մշակույթի ոլորտում՝ 120,7 տոկոսով, սպորտի ոլորտում՝ աննախադեպ՝ 210,8 տոկոսով: Կարծում ենք՝ սրանք զարգացման տանող ցուցանիշներ են»,-* նշել է նախարարը՝ ընդգծելով, որ կապիտալ ծախսերի մեծացման ուղղությամբ տարվող քաղաքականությունը շարունակական բնույթ է կրում: Անդրադառնալով «300 դպրոց, 500 մանկապարտեզ ծրագրին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ այս տարի 107 հաստատության մասով կայացվել են որոշումներ, որոնք վերաբերում են ավելի քան 30.000 երեխաների: Նախարարի խոսքով՝ նախագծային աշխատանքները հնարավորինս տիպային կամ մոդելային իրականացնելու ճանապարհն է ընտրվել, ինչը թույլ է տալիս էապես խնայել ժամանակը եւ կրճատել վարչարարությունը. *«Կարեւորում եմ Կառավարության ծրագրի մյուս թիրախ հանդիսացող՝ բոլոր դպրոցներում բնագիտական լաբորատորիաների բացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Տավուշի մարզի դպրոցներում ավարտվել է լաբորատորիաների ներդրման գործընթացը. այս տարի այդ աշխատանքներ կիրականացվեն Արմավիրի մարզում, բյուջետային գործընթացով մյուս մարզերում եւս պլանավորված են այդ աշխատանքները: Վստահ եմ, որ սա էական ազդեցություն կունենա կրթության որակի բարձրացման ուղղությամբ, որն արդեն իսկ տեսնում ենք նոր չափորոշիչների փորձնական ներդրման գործընթացի արտաքին գնահատման արդյունքներով»:*

Ընթացիկ ծախսերին անդրադառնալով՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է ուսուցիչների վարձատրությանն ուղղված ծրագրերը, մասնավորապես՝ ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը, որի շրջանակում 1565 ուսուցիչ կամ շահառու ուսուցիչների 5,5 տոկոսը կամավոր ատեստավորման արդյունքում վարձատրվում են արդեն իսկ բարձրացված դրույքաչափով եւ հավելավճարով: Ըստ նախարարի՝ ատեստավորված ուսուցիչների 28 տոկոսն արդեն ստանում է 300 հազար դրամ եւ ավելի աշխատավարձ՝ խրախուսելով մյուս ուսուցիչներին եւս ակտիվորեն մասնակցել գործընթացին:

Ժաննա Անդրեասյանը փաստել է՝ նախադպրոցական կրթության ոլորտում կարեւոր բարեփոխումներ են արվել. իրականացվել են մանկավարժների պարտադիր վերապատրաստման ու տնօրեն դառնալ ցանկացող անձանց հավաստագրման գործընթացները: Նա կարեւորել է նաեւ այդ ոլորտում համընդհանուր ներառման գործընթացի ներդրման ու կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ֆինանսավորման գործընթացները, որոնք առաջին անգամ իրականացվել են նախորդ տարվանից:

Ըստ նախարարի՝ համապատասխան աշխատանքներ են տարվել նաեւ նախնական, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթության ոլորտներում:

Գիտության ոլորտում Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է գիտնականների աշխատավարձերի բարձրացման ծրագրին: *«Գիտնականների ատեստավորման արդ-*

յունքում ունենք աշխատավարձերի փուլային բարձրացում, որը շարունակվելու է մինչեւ 2025 թվականը, եւ էական աճ ենք արձանագրելու գիտաշխատողների աշխատավարձերի մասով: Ֆինանսավորվել 86 դրամաշնորհային ծրագիր, որոնցում ներգրավված գիտնականների 73,7 տոկոսը մինչեւ 35 տարեկան են: Էական գումարներ են հատկացվել գիտական կազմակերպությունների հետազոտական հզորությունների համալրման եւ թարմացման նպատակով»,- նշել է նա՝ ընդգծելով, որ իրականացվել են մի շարք խոշորածավալ միջոցառումներ, այդ թվում՝ Սթարմուս փառատոնը:

Ըստ նախարարի՝ մշակույթի ոլորտում եւս մի շարք նոր եւ շարունակական ծրագրեր են իրականացվել. *«Կարեւորում եմ իրականացված կապիտալ ծախսերը, օրինակ՝ հուշարձանների վերականգնման մասով այն կազմել է 92 տոկոս նախնական բյուջեի նկատմամբ: Շուրջ 10 հուշարձան վերանորոգվել է պետություն-մասնավոր համագործակցության արդյունքում: Ռեկորդային՝ 1,3 մլրդ դրամ է հատկացվել մշակութային հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, որն էական ավելացում է: Մի շարք հաստատություններ ենթակառուցվածքները բարելավելու հնարավորություն են ունեցել, որի արդյունքում՝ դրանց ավելի քան 90 տոկոսում սեփական եկամուտների աճ է գրանցվել»:* Ըստ նախարարի՝ իրականացվել են 17 կրթամշակութային ծրագրեր, որոնց ներգրավվել են շուրջ 19 հազար սովորողներ: Անցկացվել է գրքի երեւանյան փառատոնը, որի շրջանակում նախորդ տարի գրահրատարակիչները վաճառել են 10 հազար գիրք: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ միջազգային փառատոնը դարձել է գրահրատարակչության ոլորտի զարգացման եւ ընթերցանության խրախուսման յուրօրինակ միջավայր:

«Սպորտի ոլորտում 307 մեդալ ենք ունեցել, որը 30 տոկոսով գերազանցում է մինչ այս գրանցված լավագույն արդյունքը»,- նշել է նախարարը՝ հավելելով, որ ընդլայնվել են ոլորտի կապիտալ ծախսերը. անվանի մարզիկների անուններով որակյալ եւ արդիական ենթակառուցվածքներով մի շարք մարզադպրոցներ են կառուցվում, որոնցում հնարավոր կլինի անցկացնել միջազգային մասշտաբի մրցաշարեր: Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ մասսայական սպորտի եւ առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումները:

Անդրադառնալով երիտասարդության ոլորտին՝ նախարարը նշել է, որ շարունակվել է *«Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին»* ծրագիրը, որից մինչ այժմ օգտվել է 7407 երիտասարդ ընտանիք: Նախորդ տարվա դրությամբ 6087 ընտանիք շարունակում է սուբսիդավորման ընթացքում ստանալ պետական աջակցություն: Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ երիտասարդական կենտրոնների բացման ծրագիրը մարզերում. այս տարի Մեղրիում եւ Իջեւանում կբացվեն այդպիսի կենտրոններ, այդ թվում՝ մասնավորի հետ համագործակցության սկզբունքով:

Նախարարը կարեւորել է նաեւ սփյուռքի ուղղությամբ իրականացվող ծրագրերը՝ ուսուցիչների վերապատրաստման, դասագրքերի ապահովման եւ մի շարք այլ կարեւոր նախագծերի շրջանակում:

Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը հետաքրքրվել է մի շարք ծրագրերի իրականացման կոնկրետ արդյունքներով, որի մասով որոշ պարզաբանումներ է ներկայացրել Գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը:**

Սիսակ Գաբրիելյանն անդրադարձել է թատրոնների ֆինանսավորման նոր մոդելին, դերասանների վարձատրության մեխանիզմներին, սպորտի ոլորտում խրախուսման չափերի վերանայմանը, ուսուցիչների ատեստավորման գործընթացին եւայլ հարցերի:

Պատգամավորները հետաքրքրվել են բուհերում դիմորդների թվի, ուսուցիչների ատեստավորման, դպրոցների ու մանկապարտեզների հիմնանորոգման գործընթացների, բյուջետային ծախսերի նպատակային օգտագործման եւ այլ խնդիրներով:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

«Երեխաները պետք է առողջ սնունդ ստանալու հնարավորություն ունենան»

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում մասնակցել է Կաթի համաշխարհային օրվան նվիրված միջոցառմանը: Պանելային քննարկմանը մասնակցել են նաեւ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ եւ տնօրեն **Նաննա Սկաուները,** ՀՀ էկոնոմիկայի եւ Առողջապահության նախարարությունների ներկայացուցիչները, *«Երեմյան Փրոջեքթս»*-ի գործադիր տնօրեն **Դավիթ Երեմյանը,** ինչպես նաեւ Ջերմուկի եւ Եղեգնաձորի երկու դպրոցների աշակերտներ: Այդ դպրոցներում 2023 թվականի հունվարից իրականացվում է *«Կաթ դպրոցներում»* ծրագիրը:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը եւ *«Երեմյան Փրոջեքթս»* ընկերությունը նախորդ տարեվերջին համաձայնագիր են ստորագրել՝ *«Կաթ դպրոցներում»* փորձնական ծրագիրն իրականացնելու մասին: 2023 թվականի փետրվարից Վայոց ձորի մարզի Ջերմուկի Գորկու անվան թիվ 1 եւ Եղեգնաձորի թիվ 1 դպրոցների 5-8-րդ դասարանների ավելի քան 300 աշակերտ ամեն առավոտ ստանում է մեկ բաժակ կաթ՝ օրն ավելի առողջ սկսելու համար:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը նախ շնորհավորել է դպրոցականներին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Արաքսիա Սվաջյանը նշել է՝ դպրոցն այն միջավայրն է, որտեղ երեխաները պետք է առողջ սնունդ ստանալու հնարավորություն ունենան: *«Դպրոցում երեխաները պետք է գիտելիք ստանան, թե ինչ է առողջ սնունդը, եւ որքան կարեւոր է այն օրգանիզմի*

ու կենսակերպի ճիշտ կազմակերպման համար»,- նշել է նախարարի տեղակալը՝ այս համատեքստում անդրադառնալով *«Կայուն դպրոցական սնունդ»* ծրագրին:

«Հաճախ դպրոցն ու երեխաները դառնում են այն ճանապարհը, որով մենք նաեւ ընտանիքում ենք փոփոխություն բերում: Ուրախությամբ պետք է նշեմ, որ այս տարվանից ՀՀ մարզերի բոլոր դպրոցների տարրական դասարանների աշակերտները «Կայուն դպրոցական սնունդե ծրագրով ստանում են տաք կամ չոր սնունդ: Ամեն ինչ անում ենք, որ բոլոր դպրոցներում անցում կատարենք տաք սննդի: Կաթն ու կաթնամթերքն առողջ սննդամթերքների կարեւոր բաղադրիչներն են, եւ այս առումով կարեւորում ենք ուսումնական միջավայրում դրանք ստանալու հնարավորությունը: Դպրոցում իրականացվող սննդի ծրագիրը նպաստում է նաեւ առողջ ապրելակերպի արդյունավետ ուսուցմանը՝ նպաստելով վարքագծային եւ գաղափարական փոփոխությունների»,- ասել է Արաքսիա Սվաջյանը՝ ընդգծելով, որ դպրոցականներն այդ կերպ գիտակցում են նաեւ առողջ սնունդ ստանալու կարեւորությունը:

ՊՀՕ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ եւ տնօրեն Նաննա Սկաուները կարեւորել է դպրոցականների շրջանում առողջ սնունդի տարածման գործընթացը, մասնավորապես՝ *«Կաթ դպրոցներում»* ծրագրի իրականացումը. *«Ուրախ եմ, որ այսօր նաեւ երեխաներին ենք հյուրընկալել: Վստահ եմ՝ ամեն առավոտ կաթի օգտագործումը դրական ազդեցություն է ունենում երեխաների առողջության վրա: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում երեխաների միայն 60 %-ն է առավոտյան թարմ կաթ օգտագործում. նպատակ ունենք նպաստել այդ թվի ավելացմանը»:*

Պանելային քննարկման ընթացքում Ջերմուկի եւ Եղեգնաձորի դպրոցականները պատմել են, որ սառը կաթ խմելու գաղափարն ի սկզբանե դժկամությամբ են ընդունել, բայց գիտակցելով դրա օգտակարությունն ու առողջարար հատկանիշները՝ այժմ սիրով են այն խմում եւ իրենց ընտանիքներում եւս խթանում են կաթի ու կաթնամթերքի օգտագործումը:

Արցախ

Գլխավոր հերոսները երեխաներն էին

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով՝ Ստեփանակերտում եւ շրջաններում մի շարք միջոցառումներ են կազմակերպվել: Տոնական ծրագրի գլխավոր հերոսները, անշուշտ, երեխաներն էին, ովքեր համերգներով, տարաբնույթ զվարճալի խաղերով, մրցույթներով ներկայացել են եւ իրենց հասակակիցներին, եւ մեծերին:

Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում կայացել է համերգ՝ քաղաքի բոլոր մանկապարտեզների սաների մասնակցությամբ: ԱՀ ԿԳՄՍ նախարարության նախադպրոցական կրթության բաժնի վարիչ **Էլմիրա Հովհաննիսյանի** խոսքով՝ նման համերգները ամենամյա են, բացառությամբ՝ 2021-ի հունիսի մեկի... *«Օրվա խորհրդում մեր հրաշք երեխաներն են՝ ապագայի հույսով ու հավատով: Ոչ միայն Ստեփանակերտի, այլեւ շրջանների բոլոր մանկապարտեզներում տոնական հանդեսներ են կազմակերպվել: Երեխաների ուրախությունն անչափ ոգեւորիչ է մեր դժվարին օրերում»,*- ասել է ոլորտի պատասխանատուն:

Հունիսի մեկին Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում կատարվել է մանուկների օրհնության կարգ:

Իսկ Ստեփանակերտի Ազատամարտիկների պուրակն այդ օրը լեցուն էր երեխաների աշխույժ եռուզեռով: Նրանց՝ համերգով, քաղցրավենիքով, պաղպաղակով շնորհավորել է ԱՀ Ազատամարտիկների միությունը: Օրը հագեցած էր նաեւ մարզական մրցույթներով: Մանկապատանեկան սպորտդպրոցներն ու մարզական ակումբները հանդես են եկել ցուցադրական պարապմունքներով:

Որ ապրեն, արարեն Արցախում

Արցախի մայր բուհում այս օրերին ընթանում են դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունները՝ ըստ ֆակուլտետների: Այս տարի բուհն ունի 450 շրջանավարտ:

Լրագրողների հետ ունեցած զրույցի ընթացքում ԱրՊՀ ռեկտոր **Արմեն Սարգսյանը** նշել է,որ Արցախում ստեղծված իրավիճակն իր կնիքն ունի ուսումնական գործընթացի վրա, սակայն ջանքեր են գործադրվել՝ այն հնարավորինս լիարժեք կազմակերպելու, ինչպես նաեւ քննաշրջանը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Գիտխորհրդի որոշմամբ թույլատրվել է շրջափակման հետեւանքով Արցախից դուրս գտնվող ավարտական խմբերի ուսանողների առաջին կիսամյակի քննաշրջանը եւ ամփոփիչ ատեստավորման քննությունները հեռավար կազմակերպելը:

...ԱրՊՀ-ում առաջին կուրսեցիների երդման եւ դիպլոմների հանձնման հանդիպատեղին անփոփոխ է, այն բուհի զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողն ամփոփող պուրակն է: Այստեղ բոլոր միջոցառումները մեկնարկում են զոհյալների հիշատակին հարգանքի տուրքով եւ ծաղիկների խոնարհմամբ: Պրոռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վալերի Ավանեսյանը,** շնորհավորելով շրջանավարտներին, նշել է, որ ուսումնական տարին բարդ էր, լի դժվարություններով՝ պայմանավորված թշնամու չդադարող սադրանքներով: *«Դիպլոմների շնորհման արարողությունը զոհված ուսանողների հիշատակին նվիրված հուշակոթողի հայացքի ներքո է: Մեր անմահ տղաների սխրանքը պետք է ուղենիշ եւ օրինակ լինի բոլորիս համար, այն է՝ պայքարել հանուն հայրենիքի եւ Արցախի լինելության: Մաղթում եմ, որ մեր բոլոր շրջանավարտներն ապրեն, արարեն Արցախում եւ իրենց ստացած գիտելիքները գործնականում կիրառեն մեր հայրենիքի շենացման համար»,*- ասել է պրոռեկտոր Վ.Ավանեսյանը:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Գիրքը՝ մեր ուղեկից

Թերթելուց առաջ... Չնայած վաղուց արդեն 3 կամ 13 տարեկան չեմ, բայց ընթերցեցի **Տիգրան Նիկողոսյանի** *«Բառ ու խոսքի տոնահանդես»*-ը:

Թերթելուց հետո... Ակամա վերլուծեցի *«տոնահանդես»* բառը՝ *տոն* ու *հանդես:*

Գրքի 1-ին մասում աչքիս առաջ փոքրիկների տոնական աշխուժությունն էր՝ արտասանություն, միամիտ, բայց մտածելու տեղիք տվող հարցեր, թոթովանք ու ճռվողյուն, իսկ երկրորդ մասում արդեն ավելի լրջացած ու հանդիսավոր շրջեցի Հայաստանի անկյուններով, հանդիպումներ ունեցա մեծերի հետ...

Վերջին թերթից հետո... Ու հասկացա, որ քիչ է. պետք է ավելացնել՝ գիրքը նախատեսված է 3-13-43-63-... Ընթերցելով ամեն մեկն ավելի ուշադիր կլինի, որ ի՛ր ծաղկած ծառի պատմությունը բաց չթողնի, լսի, ի՛ր դեղ-մարդուն շնորհակալ լինի, մտքում կամ թղթի վրա ի՛ր խաչը նկարի...

Վերջից նորից սկիզբ ... Ամենակարեւորը, գրքի թերթերն ուղղակի քեզ ստիպում են, որ ա՛յդ տարիքում, ա՛յդ օրը արժեքներիդ վերադասավորումն ու ունեցածիդ վերարժեւորումն անես....

Իսկական դեղահաբեր, իսկ դեղաչափն ու ազդեցությունը՝ կախված ընթերցողի տարիքից:

Պատկերացրի, թե ինչքան ուսուցողական, ավելի սրտաբուխ ու անկեղծ զրույցներ կունենայի աշակերտներիս հետ, եթե այս գործերից տեղ գտնեին դասագրքերում: Իսկ նրանք բարի են, սիրառատ են, հարգալից, պարզ, միամիտ, բնական. իրավունք ունեն գալու ու փոխարինելու հակամանկավարժական, կասկածելի բովանդակությամբ *«ուսումնական»* շատ նյութերի:

Գայանե ԳԱԼՍՏՅԱՆ
Երեւանի հ. 186 դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

Համակարգ

Հաստատվել են մանկավարժի հավաստագրման դասընթացի մոդուլները

«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ՝ մանկավարժի որակավորում չունեցող բարձրագույն կրթություն ստացած մասնագետները, որոնք ձեռք են բերել 30 կրեդիտ, հնարավորություն ունեն դասավանդել դպրոցներում:

Համաձայն օրենքի վերոնշյալ դրույթի՝ եթե առնվազն երկու անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը մնում է չլրացված, ապա այդ տեղի համար կարող է դիմել նաեւ տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված կազմակերպության (կազմակերպությունների), այդ թվում՝ բուհի առաջարկած համապատասխան կրթական ծրագրի միջոցով մանկավարժության առնվազն 30 կրեդիտ ունեցող անձը:

ԿԳՄՍ նախարարի հրամաններով մանկավարժի որակավորում չունեցող անձանց առնվազն 30 կրեդիտ տրամադրելու նպատակով մինչ այժմ երաշխավորվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակած ծրագրերը եւ *«Դասավանդիր, Հայաստան»* հիմնադրամը՝ իբրեւ վերապատրաստող կազմակերպություն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ մարտի 29-ի հրամանով այդ նպատակով գործածության են երաշխավորվել նաեւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման դասընթացի մոդուլները:

Մանկավարժահոգեբանական վերապատրաստումների դասընթացը նախատեսված է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բնագիտության, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ ճարտարագիտության տարբեր բնագավառներից բարձրագույն կրթություն ստացած մանկավարժի որակավորում չունեցող մասնագետների շրջանում պատրաստման/վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար:

Դասընթացի կառուցման հիմքում ընկած են ՀՀ կառավարության եւ ԿԳՄՍ նախարարության՝ հանրակրթության, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթության մասին օրենսդրական համապատասխան որոշումները եւ նորմատիվ իրավական ակտերը, հաշվի են առնված մանկավարժության, հոգեբանության, դասավանդման մեթոդաբանության տեսագործնական հիմնադրույթներն ու առաջավոր նվաճումները, ինչպես եւ ՀՀ բուհերում եւ այլ կազմակերպություններում իրականացվող վերապատրաստման դասընթացների փորձը:

Ծրագրի նպատակը կրթության ասպարեզում աշխատաշուկայի պահանջներին համահունչ մանկավարժահոգեբանական գիտելիքներով օժտված որակյալ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումն է՝ կրթական տարբեր համակարգերում մանկավարժական գործունեություն իրականացնելու համար:

Վերապատրաստման դասընթացի արդյունքում ունկնդիր մասնագետները ձեռք կբերեն մանկավարժական հմտություններ եւ կարողություններ, կտիրապետեն ուսուցման նորարարական մեթոդներին, տեխնոլոգիաներին եւ միջոցներին՝ իրենց մասնագիտական գիտելիքները հանրակրթության եւ միջնակարգ մասնագիտական կրթության հաստատությունների սովորողներին փոխանցելու համար:

Վերապատրաստման դասընթացի ավարտին ունկնդիրներին կշնորհվեն հավաստագրեր՝ դասընթացներից առնվազն 30 կրեդիտ վաստակելու դեպքում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Նպաստելով երկկողմ հարաբերությունների զարգացմանը

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է ՀՀ-ում Լատվիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Էդիթ Մեդնեին:** Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Ողջունելով դեսպանին՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է երկու երկրների համագործակցությունը եւ վստահություն հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացումը կնպաստի երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

ԿԳՄՍ նախարարը շեշտել է, որ երկու երկրների միջեւ առկա են հարաբերությունների զարգացման օրակարգ ու մեծ ներուժ, եւ պետք է ստեղծել փոխգործակցության դաշտ՝ իրականացնելով հստակ գործողություններ: Ժաննա Անդրեասյանը կարեւորել է երկու երկրների միջեւ միջբուհական երկխոսության զարգացումը: Նա անդրադարձել է *«Էրազմուս+»*, *«Հորիզոն Եվրոպա»* եւ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող մի շարք այլ ծրագրերի շրջանակում համագործակցությանը, որը ներառում է համատեղ կրթական եւ գիտահետազոտական, ինչպես նաեւ ուսանողների ու դասախոսների փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Նախարարը նշել է, որ գիտության ոլորտում նույնպես համագործակցության

զարգացման ներուժ կա՝ մասնավորապես շեշտելով՝ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեն ձեռնարկել է քայլեր եւ կապեր հաստատել Լատվիայի գիտության խորհրդի հետ՝ բարեփոխումների, գիտական նախագծերի փորձաքննության եւ մի շարք այլ ոլորտներում փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու առաջարկությամբ:

Անդրադառնալով երիտասարդության եւ մշակութային ոլորտներին վերաբերող համագործակցությանը՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ երկու երկրների միջեւ արդյունավետ համագործակցության հիմքում ընկած են նաեւ մշակութային կապերի զարգացմանը միտված քայլերը:

ՀՀ-ում Լատվիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Էդիթ Մեդնեն իր հերթին ընդգծել է՝ հատկապես կրթության ոլորտում համագործակցությունը կարեւոր ուղղություններից է: Նա տեղեկացրել է, որ Լատվիայի կառավարության ուշադրության կենտրոնում են ինչպես բարձրագույն կրթության, այնպես էլ հանրակրթության ոլորտները:

Դեսպանը տեղեկացրել է, որ նշված ոլորտներում կիրառվում են նորարար մի շարք մեթոդներ, որոնք թույլ են տալիս աշակերտներին արագ կողմնորոշվել իրենց մասնագիտության ընտրության հարցում:

Էդիթ Մեդնեն տեղեկացրել է, որ լատվիական կրթական մոդելը Եվրոպայում լավագույններից մեկն է, որը փորձարկվում է նաեւ այլ երկրներում:

Նախարար Ժաննա Անդրեասյանը պատրաստակամություն է հայտնել ներկայացնել հայաստանյան փորձը՝ նշելով, որ Հայաստանում որակյալ կրթական ծառայությունների մոդելներ կան:

Նա, հատկապես, առանձնացրել է *«Թումո»* ստեղծարար տեխնոլոգիաների, ՔՈԱՖ սմարթ կենտրոնների եւ *«Արմաթ»* ինժեներական լաբորատորիաների գործունեությունը:

Կողմերը քննարկել են փոխհամագործակցության ծրագրերի իրականացման հնարավորությունը նաեւ սպորտի բնագավառում:

Կառավարության որոշմամբ

Նոր հնարավորություններ՝ մարզումների պատշաճ կազմակերպման համար

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել *««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»* օրենքի նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ առաջարկվում է հավաքական թիմերի մարզական կենտրոնին հատկացված տարածքը, որը ներկայում ներառված է մասնավորեցման ենթակա գույքի ցանկում, հանել այդ ցանկից եւ հանձնել ԿԳՄՍ նախարարությանը՝ այն հավաքական թիմերի մարզումներին ծառայեցնելու նպատակով:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ մարզահամալիրը բավականին մեծ հնարավորություններ է ընձեռում. ունի ննջարանային մասնաշենք՝ նախատեսված շուրջ 60 հոգու համար, 2 մարզադահլիճ՝ յուրաքանչյուրը 1600 քմ: Դահլիճներից մեկի բարձրությունը 9 մետր է, որը հնարավորություն է տալիս այնտեղ իրականացնելու ամենատարբեր սպորտաձեւերի մարզումներ եւ մրցաշարեր:

«Մարզահամալիրը կարող է նաեւ միջազգային չափորոշիչներին համապատասխան ենթակառուցվածք դառնալ՝ սպորտային միջոցառումների եւ հավաքների համար: Այստեղ կարող են կազմակերպվել թե՛ խաղային, եւ թե մենապայքարային մարզաձեւերի պարապմունքներն ու հավաքները: Այս պահին հավաքական թիմերի հավաքների համար օգտագործվում են միայն Ծաղկաձորի մարզական բազան եւ Օլիմպավանը, որոնք ունեն սահմանափակ հնարավորություններ: Հաշվի առնելով միջազգային մրցաշարե-

րի կազմակերպման ու հյուրընկալման, ինչպես նաեւ մեր հավաքականների՝ տարբեր ուղղություններով գրանցած արդյունքները (նախորդ տարի ռեկորդային թվով մեդալներ ենք ունեցել՝ 307, այս տարի արդեն 135 մեդալ՝ 10 մարզաձեւից)՝ նոր ենթակառուցվածքների պահանջ կա»,- նշել է նախարարը եւ հավելել, որ այս պահին կառուցվում եւ վերակառուցվում են 12 մարզահամալիրներ եւ մարզադպրոցներ:

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը հետաքրքրվել է, թե նախատեսվում են արդյոք վերանորոգման աշխատանքներ, եւ ինչ վերջնաժամկետ է սահմանված, ինչին ի պատասխան՝ նախարարը նշել է, որ առկա են նախնական հաշվարկներ հետագա աշխատանքների մասով՝ մարզահամալիրը պատշաճ տեսքի բերելու համար:

Անդրադառնալով վերջնաժամկետին՝ Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ օրենքի փոփոխությունը դեռ պետք է հաստատվի Ազգային ժողովում, որը հավելյալ ժամանակ կպահանջի. *«Քանի որ դիմել ենք մի քանի խոշոր միջազգային մրցաշարեր Հայաստանում անցկացնելու համար, օրինակ՝ ծանրամարտի աշխարհի առաջնությունը, ապա ցանկալի կլիներ, որ ենթակառուցվածքները պատրաստ լինեին 1-2 տարվա ընթացքում»:*

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը հետաքրքրվել է նաեւ, թե ինչպես են իրականացվելու հետագա սպասարկման աշխատանքները: Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ այդ ենթակառուցվածքները կարող նաեւ որոշակի եկամուտ բերել եւ գեներացնել այն միջոցները, որոնք կուղղվեն պահպանման ծախսերին. *«Սա բերելու է մեր կողմից ուսումնամարզական հավաքների համար տրամադրվող գումարի որոշակի խնայողությունների. այս պահին մենք աջակցում ենք ֆեդերացիաներին՝ ուսումնամարզական հավաքները կազմակերպելու ոչ պետական որոշակի տարածքներում, որոնց համար հավելյալ վճարումներ ենք կատարում: Եվ երկրորդ՝ այն ժամանակահատվածներում, երբ հավաքականներն այդտեղ չեն անցկացնի մարզումներ, համալիրը կարող է օգտագործվել տարբեր մրցաշարերի կազմակերպման, վարձակալության եւ այլ նպատակներով՝ այդպես ապահովելով սեփական եկամուտներ»:*

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ սպորտի ոլորտի ռազմավարության նախագծում ենթակառուցվածքների կառավարումը եւ դրանց եկամուտների գեներացման մոդելների մշակումն առանձին ուղղություն են, այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության տարբերակով:

Նշենք, որ մարզական կենտրոնի տարածքը գտնվում է Երեւանի Ծիծեռնակաբերդի խճուղի 5 հասցեում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հիրավի աշխարհահռչակ

սկիզբը՝ էջ 1

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը շնորհավորել է բոլորին՝ նշանավոր իրադարձության կապակցությամբ, եւ նշել, որ Արամ Խաչատրյանի հոբելյանական միջոցառումներն ունեն ռազմավարական նշանակություն, եւ լրջագույն աշխատանք պետք է տարվի Արամ Խաչատրյանի ստեղծագործական ժառանգությունը վերաիմաստավորելու եւ միջազգայնորեն դիրքավորելու ուղղությամբ. *«Սա կարեւոր է ոչ միայն միջազգային, այլեւ ներպետական առումով՝ հանրային տրամադրությունների տեսակետից: Հոբելյանական հանձնաժողովի հաստատած ծրագրի իրականացմանը պետական միջոցներից հատկացվել է ավելի քան 530 միլիոն դրամ. միջոցառումներում ընդգրկված են բոլոր առաջատար ստեղծագործական խմբերը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ, Հայաստանի պետական սիմֆոնիկ, պետական կամերային նվագախմբերը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Արամ Խաչատրյան տուն-թանգարանը եւ բազմաթիվ այլ կառույցներ: Տպավորիչ է նաեւ հոբելյանական միջոցառումների աշխարհագրությունը՝ Վրաստանից սկսած՝ մինչեւ ԱՄՆ, Կանադա, Հունաստան, Ֆրանսիա, Գերմանիա: Երբ մենք խոսում ենք ժառանգության հանրահռչակման եւ մարդու անունը բարձր պահելու մասին, առաջին հերթին նկատի ունենք նրա ստեղծագործությունների կատարումը: Եթե կատարենք Խաչատրյանի ստեղծագործությունները, ուրեմն մեր գործն արած կլինենք, մեր պարտքը մեր մեծ արժեքի, մեծագույն երեւույթի նկատմամբ մարած կլինենք»:*

Արա Խզմալյանի դիտարկմամբ՝ Արամ Խաչատրյանի մասին օտար լեզուներով քիչ նյութեր են հրատարակվելգ հիմնական գրականությունը ռուսալեզու է: Այս տարի նախաձեռնվում է տարբեր լեզուներով պատկառելի պատկերագրքի հրատարակում, որը եւս կնպաստի Խաչատրյանի ժառանգության հանրայնացմանն ու միջազգայնացմանը: *«Ինձ համար Արամ Խաչատրյանն ազգային արժանապատվության, շիտակ մեջքի, անսպառ լավատեսության եւ հայ ազգի կենսասիրության բարձրագույն դրսեւորումն է: Արամ Խաչատրյանի երաժշտությունը լսելիս Հայաստանի սահմաններն ավելի մեծ են, քան նրա աշխարհագրական տարածքը, արմատներն ավելի խորն են, քան 20-րդ դարը»,-* շեշտել է նախարարի տեղակալը:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ Արամ Խաչատրյան համերգասրահի տնօրեն Նորայր Նազարյանի տեղեկացմամբ՝ օրեր անց կտրվի Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների մեկնարկը. *«Հունիսի 5-ին՝ ժամը 19:30-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա հոբելյանական համերգ. կհնչեն Արամ Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան, հատվածներ «Սպարտակ» բալետից եւ հազվադեպ կատարվող «Հանդիսավոր» պոեմը: Համերգը կղեկավարի աշխարհահռչակ հայազգի դիրիժոր Ջորջ Փեհլիվանյանը: Խաչատրյանական տրամադրությունը կշարունակվի համերգասրահի տանիքում, որտեղ առաջին անգամ կկայանա բացօթյա համերգ՝ Վահագն Հայրապետյանի «Armenian Colors Qartet»-ի մասնակցությամբ: Կհնչեն Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների ջազային մշակումները»:*

Տնօրենի նշմամբ՝ Արամ Խաչատրյանի ծննդյան օրը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր էդուարդ Թոփչյանը Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում կղեկավարի Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված փառատոնի փակման գալա-համերգը. կմասնակցեն թավջութակահար Նարեկ Հախնազարյանը եւ Ռուսաստանի Սվետլանովի անվան պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը: Կհնչի Խաչատրյանի Թավջութակի Կոնցերտ-ռապսոդիան եւ հատվածներ *«Սպարտակ»* եւ *«Գայանե»* բալետներից: Համերգը նկարահանվելու եւ հեռարձակվելու է *«Կուլտուրա»* հեռուստաալիքով:

«Ազգային ֆիլհարմոնիկի երեւանյան 15-րդ միջազգային երաժշտական փառատոնը» նվիրված է մեծ հայի 120-ամյակին: Փառատոնի շրջանակում, բացի տարբեր անվանի մենակատարների եւ դիրիժորների մասնակցությամբ համերգները, նախատեսված են շրջագայություններ Հայաստանի մարզերով հայ ունկնդրի կողմից սիրված, աշխարհահռչակ ջութակահար Սերգեյ Խաչատրյանի հետ: Համերգները տեղի կունենան Մեղրիում, Գորիսում, Կապանում, Գյումրիում, Երեւանում: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի խաչատրյանական տարվա արտասահմանյան հյուրախաղերի աշխարհագրությունը հետեւյալն է՝ ԱՄՆ, Կանադա, Հունաստան, Վրաստան: *«Նշանակալից է նոյեմբերի 15-ին Նյու Յորքի հեղինակավոր «Քարնեգի հոլլումե կայանալիք համերգը: Ողջ ընթացքում որպես մենակատար Ֆիլհարմոնիկի հետ հանդես կգա ջութակահար Սերգեյ Խաչատրյանը: Համերգների ժամանակ կհնչի միայն Արամ Խաչատրյանի երաժշտությունը»,-* նշել է Նորայր Նազարյանը:

ՀԱՖՆ-ի տնօրենը տեղեկացրել է, որ այս տարի հոբելյանական է նաեւ *«Արամ Խաչատրյան»* համերգասրահի համար. լրանում է թամանյանական նախագծով կառուցված շենքի 70-ամյակը: Հոբելյանական միջոցառումների շրջանակում շենքը բարեկարգվելու է. *«Առաջնահերթ հիմնանորոգվել են սանհանգույցները, դիմահարդարման սենյակները, կառուցվել է վերելակ: Այժմ վերանորոգվում են համերգասրահի բազկաթոռները: Վերանորոգման ավարտից հետո շատ ճոխ եւ հարմարավետ համերգասրահ կունենանք: Բոլոր աշխատանքներն իրականացնելիս հաշվի են առնվում ներառականության պահանջները՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց կարիքները, որպեսզի նրանց այցը համերգասրահ նույնպես լինի առավելագույնս հարմարավետ եւ ապահով»,-* ասել է ՀԱՖՆ տնօրենը:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգայի ակադեմիական թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Դուրգարյանի տեղեկացմամբ՝ հունիսի 6-7-8-ին, Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ, ԹՈՒՄՈ-ի այգում թատրոնը հանդես կգա բացօթյա ներկայացումներով: Կներկայացվեն *«Գայանե»*, *«Դիմակահանդես»* եւ *«Սպարտակ»* սյուիտ բալետները: Կարեւորելով մարզային այցելությունները՝ թատրոնի նվագախումբը կմեկնի Չարենցավան, որտեղ կատարելու է Խաչատրյանի *«Երրորդ սիմֆոնիան»*: ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ թատրոնը հյուրախաղերով հանդես է գալու Ֆրանսիայում, որտեղ ներկայացնելու են *«Դիմակահանդ»սը»*, իսկ հուլիսի 18-ին Սանկտ Պետերբուրգի Միխայլովյան թատրոնում տեղի կունենա գալա համերգ՝ աշխարհի լավագույն մենակատարների մասնակցությամբ: *«Համերգին մասնակցելու է թատրոնի բալետային խումբը, որը ներկայացնելու է հատվածներ «Գայանե» բալետից. այնտեղ նաեւ կհնչեն երեք արիաներ սոպրանոյի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար»,-* ասել է Կարեն Դուրգարյանը եւ կարեւորել Արամ Խաչատրյանի երաժշտության մշտապես կատարումը եւ տարածումն աշխարհում:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն Սարգիս Բալբաբյանը հիշեցրել է, որ 2023 թվականին փետրվարին նվագախումբը հյուրախաղերով հանդես է եկել Միացյալ Թագավորությունում՝ սկսելով Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները: Նվագախումբը հանդես է եկել 10 համերգներով՝ հեղինակավոր համերգասրահներում ներկայացնելով Խաչատրյանի կոմպոզիտորական արվեստը: Նվագախմբի հետ հանդես է եկել բրիտանացի ջութակահար Ջենիֆեր Փայքը, որը նաեւ Խաչատրյանի ծննդյան օրը՝ հունիսի 6-ին, ելույթ է ունենալու Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բացման համերգին: *«Այցելությունը կազմակերպել էր IMG Artists ընկերությունը, եւ մենք Միացյալ Թագավորությունում Խաչատրյանի այլ ստեղծագործություններ ներկայացնելու առաջարկներ ենք ստացել: Շուտով կլինի Լոնդոնում տեղի ունեցած համերգի տեսագրության պրեմիերան, որը կցուցադրվի Հանրային հեռուստաընկերությամբ եւ «Mezzo TV»-ով: Արդեն թողարկել ենք Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների լավագույն մեղեդիներից կազմված ռինգթոններ, ինչը նրա արվեստը հանրահռչակելու կարեւոր գործոններից է: Այս տարի թողարկելու ենք Խաչատրյանի «Դաշնամուրի կոնցերտը՝ հայտնի մենակատար Ալեքսանդր Ռոմանովսկու հետ համագործակցությամբ, ինչպես նաեւ կոմպոզիտորի ստեղծագործություններից՝ օրորոցայինների ալբոմը, որը նվեր է փոքրիկներին, որպեսզի նրանք դաստիարակվեն հայ կոմպոզիտորական արվեստի լավագույն նմուշների ունկնդրումով: Այս տարի նույնպես անցկացվելու է Խաչատրյանի անվան միջազգային փառատոնը, որն իրականացվում է «Արամ Խաչատրյան մշակութային հիմնադրամի» հետ: Քանի որ տարին խաչատրյանական է, կհնչեն միայն կոմպոզիտորի ստեղծագործությունները, համերգներում հանդես կգան ջութակահար Ստելա Չենը, թավջութակահարներ Նարեկ Հախնազարյանը, Աստղիկ Սիրանոսյանը, դաշնակահար Ժան Պոլ Գասպարյանը եւ այլք: Նվագախումբը նոր մոտեցմամբ եւ մշակմամբ ներկայացնելու է «Խաչատրյանը եւ ջազը սիրված ծրագիրը, ինչպես նաեւ կոմպոզիտորի կինոերաժշտությունը, որը կարեւոր տեղ ունի Խաչատրյանի կոմպոզիտորական ժառանգության մեջ»,-* տեղեկացրել է Սարգիս Բալբաբյանը:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն եւ *«Խաչատրյան տրիոյի»* դաշնակահար Արմինե Գրիգորյանն էլ տեղեկացրել է, որ ճանաչված *«ARTE»* ֆրանսիական եւ ռուսական *«Կուլտուրա»* հեռուստաալիքներն արդեն ֆիլմեր են նկարահանել Խաչատրյանի մասին: Նյութերը տրամադրել է տուն-թանգարանը: Թանգարանում սպասվում են նորամուծություններ, որտեղ կօգտագործվեն արդի տեխնոլոգիաները, եւ հունիսին այդ անակնկալները կներկայացվեն թանգարանի այցելուներին: *«Պատրաստում ենք միջազգային գիտաժողովի անցկացմանը: Կարեւորելով ոչ միայն հայալեզու, այլեւ օտար լեզվով Խաչատրյանի մասին պատմող գրականության լույսընծայումը՝ հովանավորների աջակցությամբ հրատարակել ենք Խաչատրյանի նամականին՝ անգլերենով, եւ հունիսին տեղի կունենա գրքի շնորհանդեսը: Աշխատում ենք նաեւ պատկերազարդ գրքի ուղղությամբ»,-* ներկայացրել է Արմինե Գրիգորյանը:

Խոսելով համերգային ծրագրերի մասին՝ նա նշել է, որ տարվա սկզբից համերգներ են կազմակերպվել թե՛ Հայաստանում, թե՛ երկրից դուրս նաեւ *«Խաչատրյան տրիոյի»* մասնակցությամբ: *«Երեկ եմ վերադարձել Ռուսաստանի տարբեր քաղաքներում մեծ շրջագայությունից, որտեղ մասնակցել ենք Խաչատրյանին նվիրված փառատոների ու համերգների: Սվեդլովսկի ֆիլհարմոնիայի փառատոնը շքեղ էր, որտեղ հինգ երեկոյի ընթացքում միայն Խաչատրյան էր հնչում, եւ փառատոնը կրում էր «Անհայտ եւ հայտնի Խաչատրյան» խորագիրը: Մեր կարեւոր առաքելություններից է՝ հնչեցնել կոմպոզիտորի ոչ միայն ճանաչված, այլեւ այն ստեղծագործությունները, որոնք քիչ են հնչում: Երեք երեկո նվիրված էր կոմպոզիտորի կամերային ժառանգությանը, որը արժեքավոր է ու հետաքրքիր»,-* ասել է Արմինե Գրիգորյանը: Նրա խոսքով՝ համերգներն անցել են լեփ-լեցուն դահլիճներում ու մեծ արձագանք են գտել: Համերգներ են կազմակերպվել նաեւ Չելյաբինսկի, Պերմի ֆիլհարմոնիաներում եւ այլուր, իսկ Պերմում, որտեղ Խաչատրյանը գրել է *«Գայանե»* բալետը, քաղաքի ամենահին ու կենտրոնական երաժշտական դպրոցն անվանակոչվել է Խաչատրյանի անունով:

Կոմիտասի անվան կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն Գարեգին Սարգսյանի տեղեկացմամբ՝ կատարելու են հիմնականում Արամ Խաչատրյանի կամերային ստեղծագործությունները: Հունիսի 14-ին կհնչի կոմպոզիտորի *«Դաշնամուրային կոնցերտը»՝* դաշնակահար Հայկ Մելիքյանի մատուցմամբ, իսկ հունիսի 29-ին կլինի համերգ՝ նվիրված Խաչատրյանի գործերի փոխադրումներին՝ կամերային երգչախմբի համար. մաեստրո Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ կլինեն փոխադրումների պրեմիերաները, որոնք անվանել են *«Խաչատրյան ֆանտազիա»:* Գարեգին Սարգսյանը նշել է, որ ծրագրել են Կամերային նվագախմբի մասնակցությամբ հյուրախաղեր. *«Հոկտեմբերին մեկնելու ենք Գերմանիա. Շտուտգարդ քաղաքում ներկայացնելու ենք Խաչատրյանի գործերը: Կլինեն նաեւ մարզային համերգներ Վանաձորում, Սպիտակում, Գյումրիում: Աշխատանքներ ենք տանում Թբիլիսիում հանդես գալու ուղղությամբ»,-* տեղեկացրել է նա:

տե՛ս՝ նաեւ էջ 8-9

Նա եղավ մեր այցեքարտն աշխարհում





Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մեծ մանկավարժ ու հասարակական գործիչ **Արամ Խաչատրյանը** ծնվել է 1903թ. հունիսի 6-ին, Թիֆլիսում: Տասնինը տարեկան հասակում որոշում է դառնալ երաժիշտ եւ ընդունվում է Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի ստեղծագործական բաժինը: Այնուհետեւ ընդունվում եւ գերազանցությամբ ավարտում է Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիան, ապա ասպիրանտուրան: Տարիներ անց Ա.Խաչատրյանի անունը ոսկե տառերով գրվեց կոնսերվատորիայի *«Լավագույն շրջանավարտներ»* հուշատախտակի վրա:

Կոնսերվատորիայում ուսանելու տարիներին Արամ Խաչատրյանը, սերտորեն կապված լինելով Հայաստանի հետ, ակտիվորեն առնչվում է հայ մշակույթի եւ նրա մեծերի հետ: Հայտնի են նրա տարբեր հանդիպումները Եղիշե Չարենցի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Մարտիրոս Սարյանի եւ այլոց հետ:

1950 թվականից մեր հանճարեղ հայրենակիցը սկսում է դասավանդել Մոսկվայի կոնսերվատորիայում, որի անզուգական պրոֆեսորներից էր մինչեւ կյանքի վերջը: Այդ ընթացքում նրա ղեկավարությամբ մոսկովյան այդ հայտնի երաժշտանոցը ավարտել են հայ եւ այլազգի բազմաթիվ հիանալի երաժիշտներ: Լինելով կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր՝ միաժամանակ, իբրեւ դիրիժոր, մշտապես հանդես էր գալիս ինչպես նախկին Խորհրդային Միության, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների լավագույն սիմֆոնիկ նվագախմբերի հետ՝ հիմնականում ղեկավարելով իր իսկ ստեղծագործությունները:

Սկսած 1950 թվականից՝ հեղինակային համերգներով հանդես է եկել աշխարհի ավելի քան 30 երկրներում:

Արամ Խաչատրյանն աշխարհի բազմաթիվ կոնսերվատորիաների, գիտությունների, արվեստի ակադեմիաների իսկական անդամ էր: Նրա ստեղծագործական եւ կատարողական գործունեությունը գնահատվել է առավելագույնս. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ Պետական մրցանակի հնգակի դափնեկիր, Լենինյան մրցանակակիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս:

Որպես պրոֆեսիոնալ կոմպոզիտորի՝ Արամ Խաչատրյանին ճանաչում բերեց նրա Առաջին Սիմֆոնիան (1934թ.), իսկ Դաշնամուրի համար կոնցերտը՝ սիմֆոնիկ նվագախմբի հետ (1936թ.) նրան բերեց համաշխարհային ճանաչում: Կոնցերտը նվիրված էր նշանավոր դաշնակահար Լեւ Օբորինին, եւ նա եղավ ստեղծագործության առաջին կատարողը:

Դրան հաջորդեց Ջութակի կոնցերտը՝ նվագախմբի հետ (1940թ.)՝ նվիրված աշխարհահռչակ ջութակահար Դավիթ Օյստրախին:

Ա. Խաչատրյանը 30-40-ական թվականներին ստեղծագործել է նաեւ թատրոնի եւ կինոյի համար: Հիշարժան են Մ.Լերմոնտովի *«Դիմակահանդես»* դրամայի, Գ.Սունդուկյանի *«Պեպո»* պիեսի հիման վրա համանուն կինոնկարի, պատմա-հեղափոխական *«Զանգեզուր»* կինոնկարի համար գրված երաժշտությունները:

Մոսկվայում կայանալիք հայկական արվեստի եւ գրականության առաջին տասնօրյակի առթիվ (1939թ.) Արամ Խաչատրյանը գրեց *«Երջանկություն»* առաջին ազգային բալետը: Այն երկրորդ խմբագրությամբ վերանվանվեց *«Գայանե»*՝ բալետի հերոսուհու անունով: Այս ստեղծագործությունը մեծ կոմպոզիտորի երաժշտական ժառանգության գագաթներից է:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45թթ.) Արամ Խաչատրյանը գրեց ռազմահայրենասիրական թեմայով բազմաթիվ եւ բազմաժանր ստեղծագործություններ: Խորհրդային երաժշտական տարեգրության նշանավոր իրադարձություններից էր նրա Երկրորդ Սիմֆոնիան (1943թ.), ուր հեղինակը երաժշտական խորը կերպարայնությամբ, հայկական ժողովրդական *«Որսկան ախպեր»* երգի մեղեդու հիման վրա, օգտագործելով ավանդական ռեքվիեմի *«Dies irae»* (ցասման օրը) թեման, հասավ զգացմունքային բարձրագույն աստիճանի: Իսկ իր Երրորդ Սիմֆոնիան՝ գրված մեծ սիմֆոնիկ նվագախմբի, 15 փողհարների եւ երգեհոնի համար, նա նվիրեց Երկրորդ աշխարհամարտի ավարտին:

1946թ. Խաչատրյանը գրեց Թավջութակի համար կոնցերտը՝ սիմֆոնիկ նվագախմբի հետ, որը, կարծես, եզրափակեց մենակատար երեք գործիքների համար (դաշնամուր, ջութակ, թավջութակ) նրա ստեղծագործությունները: Թավջութակի համար գրված երկի առաջին անզուգական կատարողը Մստիսլավ Ռոստրապովիչն էր:

Արամ Խաչատրյանի՝ 50-60- ական թվականների ստեղծագործություններին հատուկ են խորը զգացմունքայնությունը, երաժշտական նյութի ազատ-իմպրովիզացիոն զարգացումը, հումանիստական ուղղվածությունը, համամարդկային արժեքներին անդրադարձը:

Հանճարեղ կոմպոզիտորը երաժշտություն է գրել նաեւ Շեքսպիրի հայտնի պիեսների բեմադրությունների (*«Մակբեթ»*, 1955թ., *«Լիր արքա»* 1958թ.), ինչպես նաեւ *«Օթելլո»* (1955թ.) կինոնկարի համար:

շարունակությունը՝ էջ 9

Նա եղավ մեր այցեքարտն աշխարհում

սկիզբը՝ էջ 8

Արամ Խաչատրյանի գրչին են պատկանում նաեւ վոկալ ստեղծագործություններ. երեք կոնցերտային արիա կանացի բարձր ձայնի (լիրիկո-կոլորատուրային սոպրանո) համար՝ նվագախմբի հետ՝ թիֆլիսահայ ուսուցիչ Հարություն Թումանյանի, Հովհաննես Թումանյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի խոսքերով:

Հայ հանճարեղ երգահանի ստեղծագործություններից ժողովրդական լայն տարածում գտան նաեւ նրա՝ փոքր կտավի գործերը. *«Գարուն Երեւան», «Հայոց աղջիկներ», «Կենաց երգ»* (Աշոտ Գրաշու խոսքերով) եւ այլն:

Արամ Խաչատրյանի ստեղծագործության գլուխգործոցներից է *«Սպարտակ»* (1954թ.) հերոսաէպիկական, խոշորամասշտաբ բալետը, որը նշանավորվեց որպես կարեւորագույն իրադարձություն ոչ միայն հայ, այլեւ խորհրդային եւ համաշխարհային բալետային արվեստի ասպարեզում: Այն բեմադրվել է աշխարհի բազմաթիվ բեմերում: Հետագայում Մոսկվայի Մեծ թատրոնում Յուրի Գրիգարովիչի կողմից բեմականացված բալետը 1976թ. էկրանավորվեց:

Արամ Խաչատրյանը վախճանվեց 1978թ.: Նրա աճյունը փոխադրվեց Երեւան եւ հուղարկավորվեց Երեւանի Կոմիտասի անվան զբոսայգու Պանթեոնում՝ արվեստի եւ գրականության մյուս մեծերի կողքին:

Նրա անունը հավերժացնելու նպատակով՝ Երեւանի բանուկ փողոցներից մեկը, ինչպես նաեւ համերգային մեծ դահլիճը անվանվեցին Արամ Խաչատրյանի անունով: Մեծ կոմպոզիտորի անունն են կրում Երեւանի լարային քառյակը, Դաշնամուրային տրիոն:

Մայրաքաղաքի մշակութային գողտրիկ, սիրված օջախներից է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը՝ 200 տեղանոց փառահեղ համերգային սրահով, որտեղ մշտապես թեւածում է հանճարեղ կոմպոզիտորի անմահ երաժշտությունը:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը կառուցվել է նրա առանձնատան հիման վրա, որը 1947 թվականին, որպես նվեր Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից, հատկացվել էր կոմպոզիտորին:

Թանգարանի սրահները 11-ն են: Հինգ սենյակից բաղկացած հատվածը ներկայացնում է մեր հայրենակցի մոսկովյան տան միջավայրը: Թանգարանի կարեւոր մաս կազմող՝ ճաշասենյակի, ննջարանի կահույքը, աշխատասենյակի դաշնամուրը, դիրիժորական ֆրակը, նամակները եւ տնային արխիվի այլ իրեր թանգարանին է փոխանցել կոմպոզիտորի որդին՝ արվեստաբան Կարեն Խաչատրյանը: Թանգարանում առանձնահատուկ տեղ է հատկացված կոմպոզիտորի ձեռագրերին, ստեղծագործությունների առաջին հրատարակություններին:

Կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Հայաստանում ստեղծվեց Արամ Խաչատրյանի միջազգային հիմնադրամ, միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհուրդ, եւ Հայաստանի կառավարության եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ջանքերով հիմնադրվեց Երաժիշտ-կատարողների միջազգային ավանդական մրցույթ: Ահա արդեն քսան տարի այն անց է կացվում Երեւանում եւ աշխարհում վայելում է մեծ հեղինակություն:

Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ մշակութային համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյի բնորոշմամբ՝ *«Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները հոգեհարազատ եւ հասկանալի են աշխարհի բոլոր ժողովուրդներին: Նրա տաղանդը գնահատվում եւ մեծարվում է բարձր արվեստը գնահատողների շրջանակներում՝ անկախ ազգային պատկանելությունից: Դրա ակներեւ ապացույցն է Մաեստրոյի կտակած անգին ժառանգությունը խնամքով պահպանող եւ սերնդեսերունդ փոխանցող մրցույթը, որի շուրջ տարեցտարի ավելի ու ավելի շատ երաժիշտներ են միավորվում աշխարհի տարբեր ծայրերից»:*

Արամ Խաչատրյանի նամակները, գրված տարիների ընթացքում, լրացնում եւ հարստացնում են մեր պատկերացումները մեծ կոմպոզիտորի, հայրենասերի, մարդ-քաղաքացու մասին. ***«Ես շատ շնորհակալ եմ իմ ժողովրդից՝ իմ նկատմամբ դրսեւորված վերաբերմունքի համար, խոնարհվում եմ նրա առջեւ եւ ինձ պարտական համարում: Ես արդեն 70 տարեկան եմ, իմ ամբողջ գործունեությունը, ստեղծագործությունը, պրակտիկան խոսում են այն մասին, որ ես եղել եմ, կամ ու միշտ կլինեմ հայ: Իմ երաժշտությունը բազում արմատներ ունի՝ կապված հայկական ժողովրդական երաժշտության հետ ... Ես հայ եմ, եղել եմ, կամ ու կլինեմ հայ եւ իմ ստեղծագործությունը, իմ ամբողջ գործունեությունը ամենից առաջ պատկանում է իմ հարազատ ժողովրդին եւ իմ հայրենիքին՝ Հայաստանին»:***

Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ,
ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ,
պրոֆեսոր







Մայրենի

Հայոց լեզուն ՁԼՄ-ներում. զարգացու՞մ, թե՞ անկում

Երբեւեէ խոսակցական լեզվի ամենացածր մակարդակն այսպես տիրական չէր հնչել եթերում. *«Յանի, մթոմ, խի, քյանդրբազ, կապնվել, վայիս ըլնել, դզվել»:*

Հայոց լեզուն մեր սերնդին փոխանցվել է իր կատարելության բարձունքում, օրենքով ամրագրված պարտավորություններով՝ ոչ միայն չաղավաղել, այլեւ զարգացնել այն: Սակայն ո՛չ *«Լեզվի մասին օրենքը»*, ո՛չ Լեզվի պետական կոմիտեի հորդորները, բազմաթիվ մտավորականների ջանքերն ու քննադատությունները չկարողացան պաշտպանել ոտնակոխ արվող հայերենը:

ՁԼՄ-երը մեծ չափով ձեւավորում են սոցիալ-մշակութային միջավայրը, իսկ լեզուն, ըստ մասնագետների, այդ միջավայրի խտացումն է գիտակցության մեջ: Ուստի հայոց լեզվի ապագայի համար վճռորոշ է հարցը՝ այդ հզոր ուժը ծառայեցվելու է հայերենի զարգացմանը, թե՛ քայքայումին:

Այսօրվա սխալը կարող է դառնալ վաղվա նորմը (լեզվագիտական ասույթ է)

«Կարող էի ունենայի», «Կարաս գնաս», «Ուզում եմ ասեմ». ստորոգյալներում երկու անգամ կրկնվում է կատարողի դեմքը, թիվը եւ ոչ միայն. ինքն ուզում է, ինքն ասել: Այս կրկնաբանությունը պակաս խելացի է դարձնում մեր լեզուն: Մեկ անգամ նշելը բավական է. ուզում եմ ասել, կարող ես գնալ, կարող էի ունենալ:

Բազմաթիվ բառեր կան, որոնց իմաստներին չտիրապետելով, սխալ են գործածում. *«Ընդհուպ (նշանակում է չափազանց մոտ) ասել եմ», «Խնդիրը կայանում (նշն. կանգ է առնում) նրանում»:*

Տարիներ շարունակ եթերից հնչում են նույն ուղղախոսական սխալները. *«Բարձրունք, ստեսցյուն, նախագա, գտալ, հարուր, ութանասուն, Ուկրահնյա, Իռան»:* Դրանց ճիշտ արտասանությունն է՝ բարձունք, ցտեսություն, նախագահ, գթալ, հարյուր, ութսուն, Ուկրաինա, Իրան:

Գործածվում են օտար բառեր, որոնք ունեն հրաշալի հայերեն համարժեքներ. *«Քեշ (կանխիկ), կոնտենտ (բովանդակություն), կոլեգա (գործընկեր), կոնտակտ (շփում), ռեֆորմ (բարեփոխում)»:*

(Ինչ-խոսք, որոշ բառերի հայերեն տարբերակներն անհաջող են. դրանք համարժեք չեն այդ հասկացությունների բովանդակությանը.օրինակ՝ *օբյեկտիվ-անաչառ.* ինչպե՞ս պատկերացնել *անաչառ* պատճառներ: Կամ *պրոցես-գործընթաց, քիմիական գործընթաց: Էսթետիկա* հասկացությունն ավելի մեծ բովանդակություն ունի, քան *գեղագիտությունը* եւ այլն: Որոշ նորաստեղծ բառեր լեզվամտածողության հետ բախման մեջ են. շատերը խուսափում են կիրառել *պրոֆեսիոնալ* հասկացությունը, որպեսզի չգործածեն *արհեստավարժ* բառը. նույնպես եւ՝ *սոցիալական-ընկերային:* Ինչեւէ, անհաջող տարբերակները շատ չեն.պետք է ենթադրել, որ դրանք լեզվաբանների ուշադրության տիրույթում են): Լեզուն, որպես կենդանի օրգանիզմ, անդադար փոփոխությունների մեջ է: Հայերենը հարստացել է գրաբարից, առօրյա խոսակցական լեզվից, բարբառներից, ինչպես նաեւ օտար լեզուներից փոխառյալ բառերով, սակայն դրանց մուտքը պաշտոնական հայերեն չի կարող կատարվել մեր հայեցողությամբ: Լեզվաբանները գիտեն մասնագիտորեն ճիշտ օգտվել այդ պաշարներից, կանոնարկել փոփոխություններն այնպես, որպեսզի դրանք լեզվի համար զարգացում ապահովեն: Շատ գեղեցիկ բառեր կան, որոնք բնիկ հայական չեն՝ բժիշկ, ապակի, ժամանակ. դրանք փոխառվել են պարսկերենից: Մասնագետները հաշվի են առնում լեզվական փոփոխությունների օրինաչափությունները եւ աշխատում են նաեւ կանխել անցանկալի ընթացքները:

Կարելի է գրեթե մաթեմատիկական ճշգրտությամբ հիմնավորել, որ պաշտոնական (գրական) հայերենն աշխարհի ամենահինտելեկտուալ, ամենագեղեցիկ ու վեհ լեզուներից մեկն է: Բայց հայերենը հնարավոր է տգեղացնել ու հիմարացնել այն աստիճանի, որ դրանով խոսելը տհաճություն պատճառի: Նման ետընթացից հնարավոր է խուսափել, եթե տեղի տան լեզվի նկատմամբ անպատասխանատու, ոչ մասնագիտական մոտեցումները, չիմացությունն ու անտարբերությունը:

«… Իմ գիտցած լեզուներուն մեջ հայերենը բացառիկ է… նախ, որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաեւ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով»:

Ֆրեդերիկ Ֆեյդի
(ֆրանսիացի հայագետ)

«… Հայոց լեզվի մյուս կողմը, որ արժանի է հիացմունքի, նրա բառային եւ ոճային հարստությունն է: Այս առանձնահատկությունը հայ բանաստեղծներին հնարավորություն է տալիս համաշխարհային գրականության գանձերը բոլոր նրբերանգներով թարգմանելու հայերեն: Եվ բառապաշարի հենց այդ հարստությունն է, որ դժվարություն է հարուցում օտարազգի թարգմանիչներին հայ գրականությունը իրենց լեզուներով թարգմանելիս»:

Էդմոնդ Շուց
(հունգարացի բանասեր)

Կրկնօրինակման դժվարությունները

Զարմանք է հարուցում ֆիլմերի կրկնօրինակություններում թույլ տրվող սխալների քանակը, որոնց տեքստերի վրա աշխատել է լեզվաբանների մեծ կազմ՝ թարգմանիչ, խմբագիր, ղեկավար: Չնայած այդ հանգամանքին՝ ֆիլմերում հնչում են վերջին տարիներին լեզվաբանների կողմից ամենահաճախ ուղղված սխալները. *«Խնդիրը նրանում է, որ….», «Բանը նրանում է», «Չփորձվես, մենակով»:* Ճիշտ ձեւերն են՝ խնդիրն այն է, բանն այն է, չփորձես, մենակ:

Թարգմանիչների համար կա մասնագիտական կանոն՝ չաղավաղել թարգմանության լեզուն:

Եվ դարձյալ ակնհայտի մասին

Իսկ երբեմն թարգմանիչները նաեւ հանդիսանում են իրենց եւ ուրիշների թարգամանությունների խմբագիրները:

Ընդունված գործելակերպ է, որ հրապարակվող տեքստերի վերջնական խմբագրումն ու սրբագրումը կատարի տվյալ լեզվի մասնագետը՝ կլինի բժշական գրականություն, լրագրողական տեքստ, թե ֆիլմի թարգմանություն:

Տեքստերը ոստոստում են հայերենում գոյություն չունեցող լեզվական ձեւերից: Չի կարող հայերենում լինել *«Դու կլինես մեկը»* (նկատի է առնվում նրանցից մեկը), *«Կտրականապես դա չի», «Մտքիս թվաց», «Լքել ափի վրա», «Ձգել այնքան ուժեղ, որքան հնարավոր է»,* որն անգլերենից բառացի թարգմանություն է. մեր լեզվում կա ավելի կարճ ձեւ՝ ձգել հնարավորին չափ ուժեղ:

Եթե անգամ թարգմանիչներն անթերի տիրապետեին հայերենին, միեւնույնն է, չէին կարող տիրապետել հայերենի ողջ հնարավորություններին: Այդ կարողության հիմքում լեզվաբանական եւ հայագիտական այլ գիտելիքների համակարգ է, որն ամբողջությամբ գործառնելու դեպքում է միայն տալիս հարուստ լեզվական հնարավորություններ եւ անվիճելի առավելություն:

Աներեւակայելի է, թե որքան շատ են եթերի հայերենի անկման մասին սրտառուչ դատողությունները, եւ թե որքան քիչ ջանքեր ու միջոցներ են անհրաժեշտ, որպեսզի հայերենը ՁԼՄ-երում պատշաճ բարձրության վրա գտնվի:

Այսօր հայոց լեզվի հրաշալի մասնագետներ չգտնելը շատ դժվար է: Բազմաթիվ լեզվաբան- ոճագետներ, գրականագետներ սոցիալական ցանցերում են տարածում հայերենի ճիշտ ձեւերը: Ինչո՞ւ այս մարդկանց կարիքը հեռուստաընկերությունները չեն զգացել:

Տեսական ու գործնական արժեքների ողբերգական անհամապատասխանությունը

Հայերենը մեծագույն արժեք է հայ մարդու համար, բացարձակ արժեք: *«Պահիր նրան բարձր վճիտ, Արարատի սուրբ ձյունի պես…».* կհամաձայնեն բոլորը, բայց եթե կիսագրագետ ծանոթին պետք է ինչ-որ տեղ խմբագիր ընդունել, դա կարվի՝ թեկուզ հայերենը աշխարհի երեսից վերանա: Առաջին ընդունողին, ըստ երեւույթին, թվում է՝ ոչինչ, եթե միայն ինքն այդպես վարվի: Ապա տեսնելով, որ շատերն են նույնկերպ մտածել, սկսում է հավատալ իր արարքի ողջամտությանը, իրենց եսակենտրոն վնասարարների բազմություն դիտելու փոխարեն, ովքեր գործնականում ունեն միայն մեկ բացարձակ արժեք… Այս մտածելակերպը, որը ոչ միայն պետական լեզվին է վերաբերում, երկիրը կկանգնեցնի գոյության անհնարինության առաջ: Տեսական ու գործնական արժեքների միջեւ գոյացել է անդունդ, այն կլանում է ամեն ոչ նյութական բարիք, որը պիտի պահեր նաեւ նյութականը:

…Հայոց լեզվի պահպանությունն ազգային անվտանգության գլխավոր խնդիրներից պետք է լիներ:

Հեռուստանովելը՝ լեզվի ուղեցույց

Սակայն միայն նյութական շահը չէ, որ հայերենից բարձր է դասվում: Երբ հեռուստանովելի սցենարիստը կանգնում է ընտրության առաջ՝ իր կերպարին ավելի շատ բնականություն հաղորդել, թե պահպանել հայերենի անաղարտությունը, ընտրում է առաջինը: Հավանաբար մտածում է՝ էլ ի՞նչ հասարակ հայ մարդ, որ չխոսի անգրագետ հայերենով, նույնկերպ մի քանի օտար լեզու չխառնի. *«Տուժվել, վիճվել, առիթավորվել, հանել օդերով, վայիս ըլնել, պադդերժկա կայնել, ծիծաղալու»:* Ինչ վերաբերում է ճշմարտացիության ձգտումին, ապա սցենարիստները պետք է նկատեին, որ այդ կերպարներն իրականում միայն լեզվական թերություններ չունեն. ուրիշ շատ ավելի տգեղ բաներ էլ կարող են իրենց թույլ տալ, որոնք որոշ նկատառումներով եթեր չեն բերվում, ուրեմն ինչ որ այլ հարցեր են կարեւորվում՝ դրանք բացարձակ ճշմարտացի չներկայացնելով: Ո՞վ ասաց, որ հայերենն ամեն կարիքի համար կարելի է վնասել ու մենակ լեզվի առումով չունենալ կարեւորած ուիրշ հարցեր:

«Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի հովիվները, խոսում են մաքուր հայերենով. պարզ բառեր ու քերեկանական ձեւեր են գործածում ու այդ սահամը չեն անցնում, ինչպեսեւ չեն ցուցադրում այն ամենը, ինչը հովիվը կարող էր անել, օրինակ, քիթն աղմուկով դատարկել, թքել կամ հայհոյել: Որովհետեւ եթերում, ամեն առումով, կա գեղագիտական սահման, եւ քարողչամիջոցի կողմից այդ սահմանը խախտելը ցածր մշակույթ է ձեւավորում, լեզվի պարագայում՝ մերժելի խոսքային մշակույթ՝ չհաշված հեռուստադիտողին հասցրած գեղագիտական հարվածը:

Այնինչ կարող էր լինել հակառակը. սերիալի հերոսների համար ճիշտ հայերենով թեկուզ պարզ լեզվական ձեւեր գործածելը, կունենար հակառակ ազդեցություն. դրանք կփոխանցվեին հասարակություն՝ արդյունքում ժողովրդայնացնելով մաքուր հայերենը:

Գրական լեզվի ժողովրդականացումը ամենամեծ արդյունքն է, որին պետք է ձգտել. միայն այդպես կկրճատվի պաշտոնական ու խոսակցական լեզուների տարբերությունը:

Լեզվական սովորույթների ձեւավորման որոշիչ դերը

Անցանկալի լեզվական սովորույթներ ձեւավորելը, ապա դրանց դեմ պայքարելը ոչ խելամիտ է եւ ոչ էլ արդյունավետ: Անգամ հիմնավոր գիտելիքը երբեմն կարող է պարտվել սովորույթին. վերջերս Ֆեյսբուքում մտաբերում էին խոսքի վարպետներից մեկի՝ առօրյա խոսակցական լեզվի թերությունները: Իզուր չեն ասել՝ լեզուն սովորույթ է: Թե ինչ իրական մակարդակի վրա է գտնվելու տվյալ ժամանակաշրջանի հայերենը, հիմնական մասով որոշում են ձեւավորվող լեզվական սովորույթները:

Հեռուստաընկերությունները խորհրդատվության համար կարող են է դիմել լեզվաբան-ոճագետների, ովքեր կասեն՝ ինչ բառաշերտերից, ինչ քերականական ձեւերից կարելի է օգտվել՝ տարբեր կերպարներ ստեղծելու համար: Մինչեւ ո՞ր սահմանն է հնարավոր դա անել, ոչ միայն չաղավաղելով հայերենը, այլեւ տարբեր կերպարների համար հանձնարարելի լեզվական ձեւերն ամրապնդելով:

Ինչեւէ, ո՛չ կերպարը ճշմարտացի ներկայացնելը, ո՛չ այլ բան չի կարող ավելի վեր դրվել, քան հայոց լեզվի անաղարտության պահպանումն է: Դա նույնն է ինչ արվեստի գլուխգործոցի երանգը փոխել՝ ներդաշնակեցնելու համար պատին: Ցանկացած ընտրության ժամանակ թարգմանիչը, սցենարիստը պետք է վեր դասեն հայերենն իր բարձունքում պահելը, քանի որ խոսքն ընդամենը ֆիլմի կերպարի մասին է, ոչ թե հայ ժողովրդի ինքնության հիմքի:

ՁԼՄ-երը կարող են

Թե ինչ նպաստ կարող է ունենալ զանգվածային լրատվության միջոցը լեզվի զարգացման գործում, բավական է բերել միայն *«Հյուսիսափայլ»* ամսագրի օրինակը (19-րդ.): Կպատկերացնեի՞ք, որ աշխարհաբարի զարգացման երկրորդ փուլը բաժանվում է նախահյուսիսափայլյան եւ հյուսիսափայլյան շրջանների:

«Հյուսիսափայլ» ամսագիրը գլխավորում էին Ստ. Նազարյանն ու Միք. Նալբանդյանը՝ երկու խոշոր մտածողներ եւ մեծ հայրենասերներ, որոնց ջանքերով նշանակալիորեն մշակվեց ու տարածվեց գրական աշխարհաբարը: Ինչ է. հիմա չկա՞ն անվանի լեզվաբաններ, ովքեր կարող են գլխավորել ՁԼՄ-երի լեզվական քաղաքականության մշակումն ու իրագործումը:

Պետք է հիշել, որ մեր լեզվի բարձր ճաշակի ու գեղեցկության համար նաեւ պարտական ենք կոնկրետ անհատների *(«Դու մեր մեծ երթի գավազանակիր…».* Պարույր Սեւակ. *«Մայրենի լեզու»):*

«Ես սպիշկա եմ ասել, բայց ուզում եմ՝ իմ երեխան լուցկի ասի». վառ տպավորվել են մի հողագործ մարդու տարիներ առաջ ասած այս խոսքերը: Հայի այս տեսակն է մեր քաղաքակրթական երթի մասնակիցը՝ կատարելության հասնելու միայն մարդուն հատուկ իր ձգտումով:

Մենք միշտ կսիրենք ազատ ու մոդայիկ անգլերենը, հզոր ու ազնիվ աշխարհաճանաչողությամբ ռուսերենը, նրբաճաշակ ֆրանսերենը, սակայն հայերենը ողջ գեղեցկությամբ ու կատարելությամբ յուրացնելը՝ իրենը դարձնելը, Հայ մարդու համար կմնա երազանք, իսկ իրականացնելով այն՝ կդառնա անխլելի երջանկություն:

շարունակությունը՝ էջ 11

Ուսման իրավեր

Մրցույթ՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն ուսհաստատություններում 2023-2024 ուսումնական տարում մագիստրոսական կրթություն ստանալու համար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2023-2024 ուստարվա համար հայտարարում է մրցույթ՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրոսական կրթություն ստանալու նպատակով (25 կրթաթոշակային տեղ) հետեւյալ մասնագիտություններով՝

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ»,
«Ճարտարապետություն եւ շինարարություն»,
«Հնագիտություն»,
«Լեզվաբանություն»,
«Բժշկություն»,
«Արաբերեն լեզու»,
«Իսլամագիտություն»:

Մրցույթին կարող են մասնակցել բուհերի շրջանավարտները, ավարտական կուրսում սովորող ՀՀ քաղաքացիները: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության համար:

Կրթաթոշակներին հավակնող դիմորդները պետք է ներկայացնեն.

1. դիմում եւ դիմում-հարցաթերթիկ մրցույթին մասնակցելու համար, որտեղ պետք է նշվի նախընտրած մասնագիտությունը (ձեւերը կցվում են),
2. հորդանանյան կողմից ներկայացված հարցաթերթիկ,
3. ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի եւ դիպլոմի հավելվածի (միջուկի), պատճենները՝ անգլերենով թարգմանված եւ նոտարական հաստատմամբ,
4. բակալավրի ավարտական կուրսերում սովորողները՝ ակադեմիական տեղեկանք ամբողջ ուսումնառության վերաբերյալ՝ նոտարի կողմից անգլերենով թարգմանված եւ նոտարական հաստատմամբ,
5. անձնագրի պատճենը,
6. ինքնակենսագրություն (CV) (անգլերեն),
7. բժշկական տեղեկանք (հավելված) (անգլերեն լեզվով),
8. 3X4 չափի 4 գունավոր լուսանկար,
9. արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք:

Պահանջվող փաստաթղթերի բնօրինակների փաթեթը պետք է ներկայացնել 2 օրինակ պատճենի հետ միասին (1+1):

Մագիստրոսական կրթության համար դիմորդների մրցույթը կկազմակերպվի՝ համաձայն ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանով հաստատված՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության եւ ուսուցման կարգի»:*

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թվականի հունիսի 1-16-ը ներառյալ, երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00-ը, ընդմիջում՝ ժամը 13:00-14:00-ը:***

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժին (հասցեն՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 311 սենյակ, հեռախոս՝ (+374 10) 59-96-46):

Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության բյուջեի միջոցների հաշվին:

Լրացուցիչ տեղեկությունների համար պետք է դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժին (ք. Երեւան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2, հեռ.՝ (+374 10) 59-96-44, (+374 10) 59-96-46):

Արական սեռի ՀՀ քաղաքացիների՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* ՀՀ օրենքով եւ *«Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2002 թվականի օգոստոսի 29-ի N1394-Ն եւ 2015 թվականի փետրվարի 5-ի N117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2000 թվականի հունվարի 13-ի N15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»* ՀՀ կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 12-ի N 451–Ն որոշումով:

Միջազգային համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից գործուղված քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում չի տրամադրվում:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Մասիս քաղաքի հ. 3 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (2 մասնագետ, 17 եւ 24 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հունիսի 7-ից մինչեւ հունիսի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 22-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի հ. 3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Մասիս, Դպրոցականների 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-29-02 հեռախոսահամարով:

Հայոց լեզուն ՁԼՄ-ներում. զարգացու՞մ, թե՞ անկում

սկիզբը՝ էջ 10

Հայոց լեզուն համաժողովրդական գլուխգործոց է. բոլոր ժամանակներում հայերենի պահպանումն ու զարգացումը պահանջելու է հասարակական հոգածություն, քանի որ լեզուն սոցիալական երեւույթ է:

Հայոց լեզուն հայ ժողովրդի հոգեւոր մշակույթի ամենանվիրական արժեքն է. ինչպիսի՞ն այն կդարձնի մեր սերունդը. կատարելության նոր աստիճանի՝ կհասցնի, թե՞ աղավաղված կփոխանցի գալիք սերունդներին...

Սոնա ՄԵԴՈՅԱՆ

«...Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլ աշխարհին, նա միայն մեր սրբութիւնը չէ, այլ մասունքը հանուր մարդկութեան... Այդ լեզվի խնամքը, նրա անաղարտութիւնն ու պաշտպանութիւնը դրուած է մեր վրա»:

Պարույր Սեւակ

«... Զբաղմունքներուս նյո՛ւթը այսօր: Մեկն ու միակը՝ հայերենը: Գրաբարը, հայոց բարբառները: Այս է իմ սիրուս առարկան: Մի զարմանալի մասնավոր շնորհ ունեցող այս լեզուն, որ այսօր իսկ զորություն ունի ազատորեն եւ ստույգ արտահայտելու գիտական ճշտորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները եւ բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսաստվերները միաժամանակ: Կյանքիս ամեն մի վայրկյանը նվիրված է այդ ուսումնասիրությանը»:

Ֆրեդերիկ Ֆեյդի
(ֆրանսիացի հայագետ)

